

Մ. ՊԱՊԵԱՆ

ԽՈՇՀԱՌՈՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ
ՏԱՄԻՒԻՆԻ ՏԱՐՎԱ
ԲՆԹԱՑՔԱԿՄ

9(47.995)

2852

Դ-23

Պապյան, Վ.

Խորհրդային հայտնիութիւնը
գրանցելու պահին օգնութեան:

304.

ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼԱՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՐ

ՅԵՐԿՐՆԵՐԻ Հ 1961 թ.


Մ. ՊԱՊՅԱՆ

9(47.925)26
~~292~~

ԽՈՐՀՈՒԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՏԱՄԻՒՆԸ ՏԱՐՎԱ
ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ա 34062
II

2852



ԳԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

М. ПАПЯН
СОВЕТСКАЯ АРМЕНИЯ
ЗА ДЕВЯТНАДЦАТЬ ЛЕТ

Государственное издательство политической литературы
Ереван • 1939

Հայ ժողովուրդը ամենահին ժողովուրդներից մեկն է,
շատ ավելի հին, քան այժմյան յելրոպական մի շարք ժո-
ղովուրդները:

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով ընկած Ե
Արևելքի և Արևմուտքի առլրանքախոխանակության և
առևտրի համար ամենահարմար ճանապարհների հատման
կետում և ունենալով բնական հարստությունների հսկայա-
կան միջոցներ, դարեր շարունակ հանդիսացել են անվերջ
ճակատամարտերի և արշավանքների թատերաբեմ։ Նրա
վրա արշավել են՝ բյուղանդացիների, բարելացիների,
արարների, ոսմանների, մոնղոլների և շատ ուրիշ կողոպ-
տիչների, բոնակալների, արնախում հարկահանների վոհ-
մակներն ու հորդաները։ Սակայն Հայ ժողովուրդը շարու-
նակ հերոսաբար պայքարի յե նետվել բոլոր տեսակի կեղե-
քիչների դեմ, հանուն իր ազատության, իրավունքների,
հարադատ հայրենի հողի պաշտպանման։

Հայ ժողովուրդը դեռ ուշքի չեկած, մեկ տարերազմա-
կան մրրիկից հետո վրա եյին հասնում մյուս բոնա-
պետների ավերումները, վորոնք բարբարոսաբար քանդում
և ավերում եյին ստեղծագործ Հայ ժողովրդի կուլտուրան,
հափշտակում եյին նրա հալալ աշխատանքից և արդար վաս-
տակից դոյացած ունեցվածքը։ Նշված հարստահարիչներին
փոխարինում եյին ներքին՝ հայրենի կեղեքիչները՝ ֆեոդալ-
ները, իշխանները, հոգեորականությունը և որանց կամա-
կատարները, վորոնք մտրակում եյին Հայ աշխատավոր

դյուղացուն նույն անդժությամբ և ուժով, ինչպես գործում
ելին ոտար կեղեքի չների մտրակն ու սուրը։ Նրանք յեղել են
մեկը մյուսից դաժան և արնախում։

Այս բոլորից բացի՝ վրա հասալ ոռւսական ցարիզմի,
նրա ուղմա-ֆեոդալական խմակերիալիզմի նողկալի տիրա-
պետությունը, վորի ամենադաժան լծի ու կրնկի տակ
ավելի քան հարյուր տարի հեծում եր տաղանդավոր հայ
ժողովուրդը—Հայաստանի աշխատավորությունը։

Ցարիզմը վոչ մի միջոցի առաջ կանդ չեր առնում իր
խարխուլ հիմքերը ամուր պահելու, իր պետական վտած մե-
քենան ամրացնելու համար։ Այդ նպատակով կաղմակեր-
պում եր ազդամիջյան կոխվներ ու կոտորածներ, դլխավո-
րում եր հրեական ջարդերը նախասլատրաստելու դորձը։

Ցարիզմի տիրապետության տարիներին հայ ժողովուր-
դը, մնացած վոքր ազդությունների (հրեաների, ուղբեկ-
ների, կիրդիզների, տաճիկների, վրացիների, թյուրքերի)
նման դատապարտված եր ամեն տեսակի հալածանքների,
ճնշման ու շահագործման, մասսայաբար աղքատանում ու
ընչափուրկ ելին դառնում հալալ ու քրտնաշան աշխատանք
կատարող աշխատավորները։ Ցարական վոստիկանության,
չինովնիկների, ճորտատեր կալվածատերերի, դյուղական
աստիճանավորների, հողեռոր կեղեքի չնորհիվ մեծ չա-
փերի յեր հասել անտերների, վորբերի, աղքատների, լաց
ու կոծով ասլրողների թիվը։ Հայաստանը դարձել եր զարկ-
վածների, դրկվածների, վողբի ու վորբի հայրենիք։ Այն
ժամանակաշ կացությունը, աշխատավորների դրությունը
մի քանի տողերի մեջ այսպես և նկարագրել հայ ժողովրդի
տաղանդավոր բանաստեղծ անմոռաց Հովհաննես Թումա-
նյանը։

«Մանի, ժանի, ճախարակ,
Նստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Վարբերին հեր, ճախարակ։

Հուսնի լուսով մանեմ յես,
Սոլիտակ վոստեր անեմ յես,
Աղքատ սրով ու լացով,
Վորբեր պահեմ մանածով»:

Շարունակում ե.

«Վաղուց թեև իմ հայացքը անհայտին եւ ու հեռվում,
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն եւ թախառում,
Բայց կարուավ ամեն անդամ յերբ դառնում եմ դեպի քեզ,
Մղկտում եւ սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու դաղթական զալակներիու լուռ շարքերից ուժասպառ,
Դեզ դյուղերից եւ շեներից՝ տխուր, դատարկ ու խավար,
Զարկված հայրենիք,
Զրկված հայրենիք»:

Խոնվում են մտքիս հանդես բանակները անհպմար,
Տրորում են քո յերեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու չարդարար վոհմակները աղաղակող վայրենի,
Ավարներով, ավերներով, ինչույքներով արյունի,
Վոր դարձրին քեզ մշտական ու ուսուզի մի հոգիս,
Խեղճ ու լալիան քո յերդերով, հայացքներով անժակիտ,
Վողի հայրենիք,
Վորի հայրենիք»:

Միանդամայն հասկանալի յե այն ժամանակվա տխության
խավար, դատարկ, ուժասպառ, լալիան, անժակիտ հայրենիքի դրությունը:

Հայ ժողովրդի և Հայառտանի աշխատավորության
կյանքի անտանելի պայմանները շարունակվեցին հակահեղա-
փոխական դաշնակցական-մառվերիստ բանդիտների տիրա-
պետության մոայլ տարիներին ես, վորոնք այժմ հնու-
թյունների արխիվն են նետված անվերադարձ կերպով:

Հայ ժողովրդի ամենավոխերիմ թշնամի դաշնակցական-
տիրահոչակ պարոնները՝ անդլո-ֆրանսական խմակերիալիդ-
մի հավատարիմ վարձու շները, իրենց խմակերիալիստ տերե-
րի ցուցումով և աջակցությամբ կազմակերպել ելին՝ մարդ-
կության պատմության մեջ չտեսնված և նմանը չունեցող

ամեն անսակի զաղըելի դործեր։ Ծեծը, թալանը, կողոպուտը, ազգամիջյան հայ-թուրքական, հայ-վրացական կոտորածները յերկիրը հասցըել եյին լիակատար կործանման և աշխատավորությանը՝ Փիղիկական վոչչացման յեղըին։

Այն պահին, յերբ համաշխարհային խմակերիալիստական տեսական սրատերազմի պատճառով յերկիրի ժողոտնտեսությունը քայքայվել և դաշնակցականների տիրապետության տարիներին ուղղակի կործանման աստիճանի յերհասել, այդ պահին մտրակների հարվածների տակ թալանում եյին աշխատավոր շինականի վերջին ունեցվածքը, վորակեսղի լցնելին պահեստները և վիրկեցին իրենց ըռպետ ու ըռպետ սպասվող կատաստրոֆայից։ Այդ ժամանակ արդեն դանակը վոսկը եր հասել, աշխատավոր ժողովուրդը բուռն տեղությամբ եր լցվել գիշատիչ գայլերի—արյունուշտ կառավարիչների հանդեսի։ Դաշնակցականների վերջին ու ամենախիստ միջոցները չեյին աղղում աշխատավորության վրա, պայքարը ընթանում եր ճակատ առ ճակատ, կառավարությունը կանգնած եր խորտակման առաջ։ Այդ ժամին ե վելայում ստորև նշված զեկուցագրերից մեկը, ուղղված դաշնակցական ներքին և զորական նախարարներին, վորի մեջ ի միջի այլոց ասված ե.

«Գավառումս անպատճախանառ զինված խըմբերի քիվն որեցոր ավելանում ե, այժմս գոյությունի ունեն (ցույց ե տալիս 12 խմբապետների անունները։ Մ.Պ.) խմբեր, վորոնի պետական գույքերով և գենֆերով մտնում են գյուղերը, գոռով բռնագրավում են տները, դուրս վոնդում գյուղացիներին, խլում նրանց գույքերը, ահ ու սարսափը ամենուրեք ե։ Զերկարգադրությամբ մեր միլիցիայի մեծագույն մասը գտնվում ե Ալեքսանդրապոլի գավառում, մեր ուժերով հնարավոր չե զապել այդ անարխիան։ Այս պարագաներում մենի հնարավորություն չունենի վոչ

գործին հաց, վոչ ել յերկաքուղուն վառելափայտ
հասցնելու։ Այս դրությունը յերկար չի կարող շարու-
նակվել, ժողովուրդը զգված է այս ամենից։ Պետա-
կան ամբարը բոլորովին դատարկ է, նման պայման-
ներում ժողովրդից հաց գանձելը անհնարին է։ Պետա-
կան ապարատը հիմնովին բանդվում է։

Այս դրության մասին թե Զեզ և թե այլ Վար-
չության՝ մեր բոլոր դիմումները անհետևանի են
մնացել։ Մենք անկարող ենք նման պայմաններում
պատասխանատվություն հանձն առնել։

Այսու խնդրում ենք Զեր շտապ և վճռական կար-
գադրությունը։ Նման պայմաններում կատասրո-
ֆան անխուսափելի յէ, վորից հետո ամեն ինչը ուշ
կլինի»։

Ալեքպոլի Զեմստվոն. նախ. ստորագրություն

22-ին նոյեմբերի 1920 թվին

(Պետ-արխիվ, Գոնդ № 77, դորձ № 51, էջ 760)

Դաշնակցական նախարարների միջոցառումները ինչ-
քան կտրուել և վճռական լինելին, իղուր եր, նրանք կյան-
քի կողմից դատապարտված եյին վոչնչացման։ Այնուամե-
նայնիւ դատակարդային թշնամին, թեկուղ իր մահամերձի
վերջին շրջանում, ավելի կատաղի յե դառնում։ Հենց այդ
մահամերձ շրջանում իմոլերիալիստական սկետությունների
հրավատարիմ ծառաները, իրենց «վերջնական» նպատակի՝
«ծովից ծով» Հայաստան ստեղծելու սիրահարները ուղում
եյին վերահսս կատաստրոֆայից դուրս կատ աղբեջանյան
աշխատավոր ժողովրդին կոտորելու, թալանելու, նրանց
գյուղերն ու շենքերը հրկիղելու միջոցով։ Յուլուքանչյուր
աշխատավորի սիրտը ճմլվում և տտելությամբ է լցվում,
հիշելով դաշնակցական բանդիտների հրեշտավոր արարքնե-
րը։ Նրանց դպիելի գործունեյության մասին և վկայում

ուսուցիչ Հյուսեյին Ախուևոյ Զադեյի 1920 թվի հունվարի 23-ի հեռաղերը՝ ուղղված Բաղվի պառլամենտին, վորի մեջ առված է՝

«Հեռագրում ենք յերկրորդ անդամ : Զանդեղուրի վոչնչացման յենթակա մուսուլմանները հղում են բարի առողջության ցանկություններ : Վորքան ել դժանդեղուրցիները վողբային, նրանց հառաջանքները մնացին ձայն բարբառո հանապատի ու լեռների կերճերից այն կողմը չանցան : Կտրված են կանանց սովինքները, յերեխանները թափոված են, դլուխներն ու մարմինները կտրված, արյունաշաղախ : Դաշնակցականների ձեռքը ընկած զեղեցիկ աղջիկները բռնաբարվում են... Յեթե կառավարությունը արտակարգ միջոցներ ձեռք չառնի, մուսուլմանները կորած են» :

(Պետարևիլ, Ֆոնդ № 3, դորձ № 478, էջ 61)

Դաշնակցական ավաղակինների շայկան ավելի հեռու յեղնում : Հաշտության սլայմանաղիր կնքելու ժամանակաշրջանում ավելի կատաղի կերպով կոտորում ե աղբրեջանական աշխատավորությանը :

Դաշնակցական «կառավարիչների» խորամանկ ու սահմանադատակ արարքների մասին ե վկայում Աղբրեջանի արտաքին գործերի մինիստրի 1920 թվի հունվարի 22-ի հեռաղերը՝ ուղղված դաշնակցական արտաքին գործերի մինիստրին : Երա մեջ առված ե .

«Հայաստանի կառավարության վորքերը, զինված հրոսակային բանդանների հետ միասին՝ Զանդեղուրից Շուշիա դավառի ուղղությամբ սկսել են հարձակողական գործողություններ, ընդվորում նրանց շարժման ճանապարհի վրա ընկած մուսուլմանական դյուղերը յենթարկված են կոտորածի, վորոնցից իննը թարամնված են վերջին որերս : Բուռն կերպով բողո-

քելով դրա դեմ, անհրաժեշտ եմ համարում Ձեզ
հայտնելու հետևյալը .—1919 թ. նոյեմբերի 23-ին՝
Աղբբեջանի և Հայաստանի կառավարությունների
միջև հաշտության համաձայնությունը ստորագրելուց
հետո և դրան հաջորդող ժամանակամիջոցում Զան-
դեղուըի դավառի շրջանում դաշնակցական զորքերի
կողմից վոչնչացված ե մոտ քառասուն դյուզ . . .» :

Ինչքան ուղում եր, թող Աղբբեջանի արտաքին դրուժերի
մինիստրը փաստելը կոնկրետ նշեր և դեսլքերը հուղիչ նկա-
րագրեր, միևնույն եր, դաշնակցական կանխրալները՝ Նժդե-
հը և նրա նման ավաղակները առանց խղճի խայթ զդալու
կոսորում ելին անխնա : Այդ մասին ե վկայում 1919 թ. նո-
յեմբերի 30-ի՝ Նժդեհի հրամանը՝ ուղղված Ղափանի, Գըն-
դեմաղի, Տաթեւի զորամասերի պետերին : Նրա մեջ աս-
ված ե .

«Կրակի մատնել, այրել Փիբիլուից դեպի արե-
մուտք դուխող մուսուլմանական բոլոր դյուղերը :
Գրոհների ժամանակ դործածել մեծ քանակությամբ
ուժանակ և պայթուցիկ տակառ : Նշանառությունը
կատարել կարբիդային լամպերով, դունավոր խա-
բույկներով և դինամիտային փամփուշտներով :

Ղափան-Գնդեմաղ-Գողթանի ուղարմական ուժերի
ընդհանուր հրամանատար՝ Նժդեհ» :

Ահա այսպես ելին վարվում դաշնակցական մառդերիստ-
ները աղբբեջանական և վրացական աշխատավորության
նկատմամբ : Նույնը կատարվում եր աղբբեջանական, մուսա-
վաթականների և վրացական մենշենիկների կողմից : Անվերջ
կոտորում ելին հարեան աշխատավոր ժողովուրդներին,
հանուն մի բուռ բուրժուակալվածատերերի-կուլակ-առե-
տրականների շահերի, ի հաշիվ աշխատավորների բնաջընջ-
ման ու կեղեքման ավելի հարստանում ելին մի խումբ շա-
հագործողները և խմբապետ մառդերիստները :

Այն ժամանակ, յերբ հողադործ աշխատավորները կտրու ելին մի կտոր հացի, սնվում ելին կանաչով, հաղարներով կոտորվում ելին սովոր, տիֆ հիվանդությունից, դաշնակցական մառզերիստների ամենափոքր աստիճանավորներից սկսած մինչև ամենախոշորները լողում ելին շոայլության ու ցուի կյանքի մեջ: 1919 թվին՝ դաշնակցական պատլամենտի պատերի տակ հավաքված կիսակենդան ու սովորենթակա բաղմության աչքերի առաջ զինվորական աստիճանավորները շոայլում ելին հսկայական միջոցներ, ամենոր քեֆ ու խնձույք ելին կաղմակերպում: Յերեանի ճաշաբաններից մեկում կաղմակերպված քեֆի ժամանակ խմբապետի ձիուն քեշմիշով փրավ են ուտեցնում և գոռում են «Զանդիրասար ատլեչայետ»:

Այսպես եր դաշնակցական տիրապետության պարիներին: Դաշնակցական հրեշները յերկիրը դարձրել ելին ավերակների, վորբերի, համաճարակ հիվանդությունների, դերեղմանոցների վայր: Գյուղատնտեսությունը, առանց այն ել աննշան արդյունաբերությունը հասցրել ելին անկման, վարելահողերը դարձրել ելին անմշակ, կործանման յեղբին եր հասել հայ ժողովրդի դարերից իւլեր ստեղծագործ կուլտուրան, դրեթե լիկվիդացիայի ելին յենթարկվել դպրոցները, աշխատավորների վաղվա կենդանի մնալու հույսերը կտրված ելին: Միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության լույսի տակ, Լենինի—Ստալինի ամենաշղթ կուսակցության ղեկավարությամբ, ոռւս մեծ ժողովրդի ողնությամբ, հայ ժողովուրդը գտավ իր իսկական փրկությունը, իր յերկիրը հայտարարելով Խորհրդային:

1920 թվին Հայաստանի խորհրդայնացման առթիվ ընկեր Ստալինը գրեց:

«Տանջված ու բազմաչարչար Հայաստանը, Աստանտի ու դաշնակների վողորմածությամբ սովոր, բայբայման ու գաղքի մատնիված,—բոլոր «բարեկամների» կողմից խարված այդ Հայաստանն այժմ իր

փրկությունը գտավ այն բանում, վոր իրեն հայտարարեց խորհրդային յերկիր։ Վոչ Անգլիայի, հայկական շահերի «դարավոր պաշտպանի» կեղծ հավատիացումները, վո՞չ Վիլսոնի տիսրահռչակ տասնչորս կետերը, վո՞չ Ազգերի Լիգայի լայնադղորդ խոստումները՝ Հայաստանի կառավարման, նրա «մանդատով» չկարողացան (և չեյի՛ն կարող) փրկել Հայաստանը կոստրածից ու Փիզիկական բնաջնջումից, — միայն խորհրդային իշխանության գաղափա՛րը խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն քերեց Հայաստանին... Թող գիտենան բոլոր նրանք, ում հարկ է գիտենալ, վոր այսպես կոչված՝ հայկական «պրոբլեմ», վորի վրա ապարդյուն կերպով գլուխ եյին ջարդում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, իվինակի յեղավ լուծելու միայն խորհրդային իշխանությունը»։

Հայ աշխատավորությունն ու Հայաստանի ժողովուրդը, վորոնք ընդունակ են յեղել բոլոր տեսակի նվաճողների ու համաշտակիչների դեմ անդուլ պայքարելու, հանուն իրենց աղատադրման, լայն իրավունքի ու ստեղծադրծ աշխատանքի, նույն տենչով ել պայքարում եյին հակահեղափոխական Դաշնակցության դեմ։

Հայաստանի աշխատավորությունը Լենինի—Ստալինի վառապանծ կուսակցության դեկավարությամբ, յեղքայրական ժողովուրդների ողնությամբ, 1920 թվի նոյեմբերյան որերին վոչնչացրեց դաշնակցական բանդաները։ Հայաստանին փրկություն բերեց մեր լայնածավալ հայրենիքի անպարտելի կարմիր Բանակը՝ Կիրովի, Որջոնիկիձեյի, Միկոյանի առաջնորդությամբ։

Խորհրդային իշխանությունը խսպառ վերացրեց աղքամիջյան կոտորածները, սովոր, աղքատությունը, համաձարակ հիմանդրությունները, տղիտությունը, իրավունքների անհավասարությունը և այլն։

Բնության կողմից ստեղծված բարիքները ի՞ն սպաս դըր-
վեցին մարդկության ոգուագործմանը, խոսրան ու անմշակ
հողերը դարձլեցին պիտանի և բերքառատ, աշխատավորու-
թյունը դիմեց աշխատանքի, կյանքը դարձավ ուրախ ու-
ժաղկուն: Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը,
մեր անծայրածիր հայրենիքի բազմազդ և բազմամիլիոն ժո-
ղովուրդների համերաշխ ընտանիքում, Լենինի—Ստալինի
անպարտելի դրոշը ձեռքին, վոգեորության ու խանդախ-
ռության զգացմունքով լցված, հաստատ համոզված սոցիա-
լիզմի հաղթանակներին՝ դնում ե դեպի յերջանկության նո-
րանոր բարձունքները:

Հայ ժողովրդի ազատարար, մեր հայր ու բարեկամ
մեծ Ստալինի ղեկավարությամբ ու ամենորյա ողնության
շնորհիով՝ ամբողջակես փոխվել ե Հայաստանը: Ամեն ինչից
զուրկ, քայլայված ու ավերված նախկին Հայաստանը դար-
ձել ե արդյունաբերապես զարդացած հանրապետություննե-
րից մեկը:

Նախկին Հայաստանը զուրկ եր ծանր արդյունաբերու-
թյունից: Յերևանում կային մի քանի մանր-մունի դործա-
րաններ. մի քանի տասնյակ բանվորներով: Այդպիսիներից
եր՝ Շուստովի կոնյակի գործարանը 40 բանվորով, Գար-
բիելովների կաշվի, Տեր-Ավետիքովի մեխանիկական արհես-
տանոցները և այլն: Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը
հանձնված եյին ոտարերկրյա կապիտալիստներին ողագոր-
ծելու, այն ել 18—20 թվերին հասցվել եյին քայլայման:

Դաշնակցության տիրապետության տարիներին այսպես
կոչված արդյունաբերության արտադրանքը կազմում եր
մոտ մեկ միլիոն 600·000 ռուբլի կամ այն ժամանակվա
ժողտնտեսության յեկամտի 10%-ը:

Խորհրդային իշխանության 19 տարիների ընթացքում
ոնկի պես բուսել են Հայաստանի արդյունաբերական հսկա-
գործարաններն ու կոմբինատները, ինչպիսիք են Խորհրդա-

յին Հայաստանի պարծանք՝ Կիրովի անվան «Սովորեն» Մինթետիկ-Կառուչուկի կոմբինատը (Յերևանում), վորի կառուչուկի թողարկման ժամկետը սահմանված է այս տարի, Քիմիական կոմբինատը (Կիրովականում), ցեմենտի գործարանը (Արարատում), Տեքստիլի և մոխ կոմբինատները (Լենինի քաղաքում), պղնձի և պղնձարջասովի գործարանները (Ղափանում և Ալավերդում), Զեթ-ոճառի, Կոնսերվի, գործարանները և Արարատ Տրեստը (Յերևանում), Արթիկուֆ և Սնիսլեմզա հանքերն ու թեթև արդյունաբերության ու անդի մի շարք այլ գործարանները: Կառուցվել են մի շարք խոշոր ելեկտրոկայաններ, ինչպիսիք են՝ Առաջին ու յերկրորդ Յերտեսները, Քանաքեռդեսը, Լենգեսը, Զորագեսը և մի շարք այլ ելեկտրոկայաններ: Մոտակա տարիներին կավարտվի Սևան-Զանգվի կամկատը և այլն: Ամենուրեք ուսումնասիրվում և հայտաբերվում են նորանոր հանքեր և բնական այլ հարստություններ, վորոնք թագնված են Հայաստանի հարուստ հողի ընդերքում: Վերջերս հայտաբերվել է Զանգեղուր լեռնավայրում պղնձի ու մոլիբդենի նիսխինոր հանքատեղը, վորը մի քանի անգամ հարուստ է, քան Ալավերդու և Ղափանի հանքատեղերը միասին վերցրած Հայտաբերված են նաև ածխի յերկու հանքատեղ Զաջուռում (Լենինականի մոտ) և կարաբաղլարի շրջանում:

Խորհրդային Հայաստանը անցյալի հետամնաց ագրարային յերկրից վերածվել է ինդուստրիալ-ագրարային յերկրի: Որինակ՝ 1913 թվին արդյունաբերության արտադրանքը յեղել է 21,7%, գյուղատնտեսության՝ 78,3%: 1919 թվին՝ արդյունաբերության արտադրանքը յեղել է 10%, գյուղատնտեսության արտադրանքը՝ 90%. 1928 թվին՝ արդյունաբերության արտադրանքը 22%, գյուղատնտեսությանը՝ 78%: 1938 թ. արդյունաբերությանը 75,5%, գյուղատնտեսությանը՝ 24,5%:

Այս թվերը ցույց են տալիս խորհրդային իշխանության որով և հատկապես Ստավրինյան յերկու հնդամյակներին կա-

տարմած խոշոր տեղաշարժերը արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշռում։ Յերկու հնդամյակների ընթացքում յերկրի արդյունաբերությունը աճել է չտեսնված չափով։ Այս թվերը ցույց են տալիս նախկին Հայաստանի հետամնացությունը, առհասարակ և արդյունաբերության զծով հատկապես։ Ժողովնականության պատկերը լրիվ չեր լինի, յեթե ցույց չտայինք առանձին ձյուղերի արտադրանքի չափը։ Այսպես, որինակ, արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքը (26—27 թվերի անվտանգությունը—հազար ոուրլիներով) հետևյալն եր։

1913 թ. 1919 թ. 1938 թ.

ա) Արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքը	95·576	16·815	433·032
բ) Այդ թվում՝ արդյունաբերության համախառն արտադրանքը	20·724	1·688	326·808
շ) Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	74·852	15·127	106·224

Այս թվերը ցույց են տալիս ոռւսական ցարկովմի, այդ ամենավայրագ շահագործողի տիրապետության տարիները, յերբ արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքի առանց այն ել շատ քիչ քանակությունը՝ 95 միլիոն 576 հազար ոուրլուց 1919 թվին հասցվեց 16 միլ. 815 հազար ոուրլու։

Այս թվերը ցույց են տալիս, վոր Հայաստանի խորհրդայնացման 19 տարիների ընթացքում ձեռք բերածն իրոք հնարավոր եր միայն խորհրդային իշխանության համերաշխ իրադրության մեջ ացիալիզմի յերկրում, վորսկեզի մի տարվա ընթացքում արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմեր 433 միլիոն 32 հազար ոուրլի, իսկ արդյունաբերությանը 326 միլիոն 808 հազար ոուրլի։

1939 թվի 9 ամսում՝ նարկոմատային բոլոր արդյունաբերությունների արտադրանքը կազմում է 155 միլիոն 739 հազար 200 ռուբլի, վորը 1938 թվի 9 ամսվա արտադրանքի համեմատությամբ կազմում է 129,4%:

Այս ապացուցում է, վոր մեր արդյունաբերության մեջ աշխատող ստախանովականները, հարվածային ու քրտնագան աշխատանք կատարողները աշխատում են յերկրի հանդեպ իրենց պարտքը պատվով կատարել: Արդյունաբերության բնադասառում աշխատող շատ կոլեկտիվներ մտնելով ԽՎԻ կուսհամադումարի և Յ-րդ հնդամյակի անվան սոցմրցման մեջ, աշխատում են ծաղկող հայրենիքին ավելի շատ և վորակով ապրանք տալ:

Խորհրդային իշխանության տարիների ընթացքում յերկրի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել են պատկառելի գումարներ, որինակ՝ մինչև 1938 թ. վերջը ներդրվել է մեկ միլիարդ 610 միլիոն 172 հազար 500 ռուբլի, վորից՝ առաջին հնդամյակում ներդրվել է 312 միլիոն 277 հազար 600 ռուբլի, յերկրորդ հնդամյակում ներդրվել է 974 միլ. 890 հազար 900 ռուբլի: Միայն 1938 թվին ներդրվել է 349 միլիոն 897 հազար ռուբլի, իսկ մնացած դումարը ներդրվել է մինչև 28—29 թվերը: Այդ գումարները ներդրվել են ժողովրդական հետեւյալ բնադամառներում՝

Արդյունաբերության մեջ

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	80 միլիոն	453 հազար	300 ռուբլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	233	»	639
Միայն 1938 թվին՝	84	»	683

Եներգետիկ

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	37 միլիոն	764 հազար	900 ռուբլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	152	»	462
Միայն 1938 թվին՝	20	»	814

Գյուղատնտեսության մեջ

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	98	միլիոն 580	հազար 500 ռուբլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	199	>	753 > 100 >
Միայն 1938 թվին՝	47	>	689 > ռուբլի:

Տրամադրում

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	23	միլիոն 951	հազար ռուբլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	62	>	292 > 600 >
Միայն 1938 թվին՝	մեկ	>	746 > ռուբլի:

Լուսավորության քնազավառում

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	13	միլիոն 385	հազար 700 ռուբլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	60	>	178 > 200 >
Միայն 1938 թվին՝	26	>	17 > ռուբլի:

Առողջապահության քնազավառում

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	10	միլիոն 521	հազար 500 ռուբլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	37	>	494 > 100 >
Միայն 1938 թվին՝	8	>	757 > ռուբլի:

Քնակարանային տնտեսության մեջ

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	22	միլիոն 103	հազար 800 ռուբլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	107	>	426 > 900 >
Միայն 1938 թվին՝	28	>	479 > ռուբլի և այլն:

Այս թվերը ցույց են տալիս մեր ժողոտնակառության տարբեր բնագավառներում տարեցտարի կատարված աճը. բնորոշ են արդյունաբերության, ներդետիկայի բնագավառներ, վորակես ժողոտնակառության վորոշիչ ձյուղերում արված ներդրումները: Հիմնականում այս յերկու բնագավառներից եր կախված սոցիալիստական դյուցատնակառության ուժնացած բնագավառների աննախընթաց թափ:

Խոշոր միջոցներ են ներդրված տրանսպորտի բնագավա-

ռում, վերը ժողովնաեսության մեջ կատարելու յե այնպի-
սի դեր, ինչպես որդանիզմի արյունատար անոթները։ Մի-
այն սոցիալիստական իրավակարգում հնարավոր և ժող-
լուսավորության, բնակարանային շինարարության, առող-
ջասլահության մեջ ներդրել այնքան գումարներ, ինչ ներ-
գրիված է մեր ընդարձակ հայրենիքի անբաժանելի մի մասը
կազմող Խորհրդային Հայաստանում։

Մեր բոլոր նարկոմատային արդյունաբերական ձեռ-
նարկությունները 1938 թվին արտադրել են՝ 120 միլիոն
362 հազար 600 ռ. ապրանք (հաշված 1926—27 թվերի ան-
փոփոխ դներով)։ Այդ տեսակետից արժե նշել մեր արդյուն-
արերության հետեւյալ ճյուղերը, վորոնք 1938 թվին ար-
տադրել են՝

Ալավերդու և Ղափանի պղնձի հանքեր՝ 11 միլիոն 610 հազ. ռ. ար-
ագրանք։

Ամբողջ Ելեկտրո-կայանները՝ 20 միլ. 666 հազ. ոռորդու Եներգիա
Քիմիական գործարաններ՝ 40 միլ. 255 հազ. ոռորդու։

Մեր կոմբինատները (Լենինական—Յերևան)՝ 15 միլ. 253 հազար
ռուբլու։

Հացի տրեստ՝ 13 միլիոն 244 հազար ռուբլու։

Ծխախոտի գործարանը՝ 8 միլիոն 919 հազար ռուբլու։

Կարի գործարանը (Լենինական—Յերևան)՝ 11 միլ. 948 հազ. ռուբլու։

Կոնսերվի գործարանն արտադրել է 6 միլ. 991 հազ. ռուբլու։

Լենինականի չուլքու գործարանը՝ 6 միլ. 154 հազ. ռուբլու արտա-
դրանք և այլն։

Մեր շաբաթ դորձարաններ արտադրել են հետեւյալ քանակությամբ
ապրանքներ՝

Կոշկեղեն—246 հազար զույգ։ Բյազ—13 միլիոն 700 հազ. մետր։
Կանսերվ—18 միլիոն 250 հազար տուփ, խոռոմ կաշի՝ 374 հազար քա-
ռակուտի մետր, ծխախոտ՝ մեկ միլիարդ 600 միլիոն հատ։ Հացի և
բուլկու թխվածքներ—45 հազար 100 տոնն և այլ տեսակի բաղմաքա-
նակ ապրանքներ ու մթերքներ, վորոնք գնում են մեր աշխատավորա-
կան ժամաների կարիքները հոգալու համար։

Մեր ծանր արդյունաբերության զարգացման շնորհիվ
արագ թափով առաջ և մղվում թեթև ու անդի արդյունա-

բերությունը։ Այդ տեսակետից Հանրապետության պար-
ծանքն են հանդիսանում Լենինականի Տեքստիլ կոմբինատը և
Տրիկոտաժի գործարանը, վորոնք յերկրին տալիս են խոշոր
քանակությամբ բյաղ, տրիկոտաժ, մանվածք և այլն։
Անցյալում առհասարակ թեթև և սննդի արդյունաբերու-
թյունից զուրկ Հայաստանը այժմ ունի մոխ կոմբինատներ,
Կոնսերվի, Մակարոնի, Զեթ-ոճառի, Ծխախոտի գործա-
րաններ, Արարատ Տրեստ իր լայն ճյուղավորված ցանցով։
Տրեստ, վորը խորհրդային յերջանիկ ժողովրդի համար տա-
բեկան տալիս ե ավելի քան 78·000 հեկտոլիտր գինի, 48·000
հեկտոլիտր կոնյակ, 20·000 հեկտոլիտր ողի, 330·000 հեկ-
տոլիտր լիկյոր և այլ տեսակի քաղցր ըմպելիքներ։ Տրես-
տի ամբողջ շրջանառությունը տարեկան կազմում ե ավելի
քան 130 միլիոն ռուբլի։

Մեր ծանր, թեթև ու սննդի արդյունաբերությունները
մեր լայնածավալ յերկրին տալիս են այն ամենը, ինչ ան-
հրաժեշտ է մեր հայրենիքի ուրախ ու յերջանիկ ժողո-
վուրդներին։

Ժողովրդական տնտեսության կարևոր ճյուղերից մեկը
յերկաթուղային տրանսպորտն է։ այդ կարևոր ճյուղը
նույնական չափազանց աննշան եր դարձացած, իսկ Դաշնակ-
ցության տարիներին հասցված եր լիակատար քայլքայման,
չկար վառելանյութ, չկային նաև չվացուցակներ, կարդ
ու կանոնի մասին խոսք լինել չեր կարող յերկաթուղային
տրանսպորտում։ Չվացուցակների վոխարեն գործում եյին
դաշնակցական չինովնիկների կամայականությունները,
բարձումը և բեռնաթափումը հասել եր աննշան չափի։ Յեթե
նկատի չունենանք Դաշնակցության տարիներին յեղած բար-
ձումը և բեռնաթափումը, 1913 թվի համեմատությամբ
1938 թ. բարձումն ու բեռնաթափումը ավելացել ե մոտ
տասնյերեք անգամ։ Բեռնաշրջանության ասպարեզում ձեռք
բերված այս վիթխարի նվաճումներն անգամ դերազանցվե-

ցին հետաղացում։ Այսպես որինակ, 1938 թվի կես տարվա համեմատությամբ 1939 թ. կես տարում ալլանը կատարված է 109,3 %-ով։

Մեր ստախանովական ու հարվածային յերկաթուղայինները աշխատանքները կատարում են այնպես, ինչպես վայել և Ստալինյան հոգատարությամբ աճած հայրենասեր յերկաթուղայիններին։ Դաշնակցության ժամանակվա խճուղային ճանապարհների մասին խոսելն ավելորդ է, քանի վոր խճուղային ճանապարհները հասցվել ենին այն աստիճանի, վոր վարելահողերից տարբերել հնարավոր չեր։ Մի շարք շրջաններում անողամ սայլուղի ել չկար։ Նախանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու միջզյուղյա ճանապարհները կարելի յեր անցնել հետիւոն, իսկ ապրանքների տեղափոխումը միայն ձիերի և ջորիների միջոցով եր կատարվում։ Այժմ չես կարող դանել մի շրջան կամ վորեւ ույուղ, ուր ավտոմեքենա չանցնի, յեթե չհաշվենք հատ ու կենու բայցառությունները։

Հայաստանում խճուղային ճանապաշինարության ապարեղում վիթխարի նվաճումներ ունենք։ Այս տարի հսկայական աշխատանք և կատարվել խճուղի-ճանապարհների ասֆալտապատման, յեղածների լայնացման, կամուրջների կառուցման վրա։ Այդ տեսակետից հրաշալի աշխատանք և կատարված Յերեանից Սևան տանող խճուղիում։ Իրենց լավ և հարվածային աշխատանքների համար խճուղային ճանապարհների վրա աշխատող մի շարք ընկերներ պարզեատրվեցին Հայկական ԽՍՀ Գերազույն Խորհրդի Նախադահության կողմից պատվողրով և արժեքավոր իրերով։

Հայալ ու քրտնաշան աշխատանք կատարող մեր բանվոր-ծառայողների, ինժեներ-տեխնիկների, մասնագետների շնորհիվ յերկիրը ստացել և չտեսնված արտադրանք, վորի շնորհիվ տարեցտարի աճել և աշխատավարձի ֆոնդը և բանվորների ու ծառայողների միջին աշխատավարձի չափը։ Այսպես, որինակ,

Բանվոր-ծառայողների միջին քանակը 1932 թ. յեղել է
93·996 հոդի: 1935 թ. յեղել է 101·165 հոդի: 1937 թվին՝
111·178 հոդի: Յուրաքանչյուր բանվոր-ծառայողի միջին
աշխատավարձը 1932 թ. յեղել է 1541 ռուբլի: 1935 թվին՝
2·566 ռուբ.: 1937 թվին՝ 3·352 ռ.:

Նարկոմատների գծով բանվորների տարեկան միջին աշ-
խատավարձն ունի հետեւյալ պատկերը:

Ցեթե 1932 թվին տարեկան միջին աշխատավարձը
յեղել է 6·691 ռուբլի, 1935 թվին՝ 9·091 ռուբլի, 1938 թ.
յեղել է 13·109 ռուբլի, վոր 1932 թվի համեմատությամբ
կազմում է 195,9%:

Այս թվերը խոսում են Լենինի—Ստալինի կուսակ-
ցության դեկարությամբ ու խորհրդային իշխանության
շնորհիվ ստեղծված այնպիսի սլայմանների մասին, վորոնք
հատուկ են ու հնարավոր միայն Սոցիալիստական յերկրում:
Այդպիսի յերեսութ անհասանելի ու անիրադորժելի յե կա-
պիտակալիստական յերկրներում:

Դաշնակցության տիրապետության ժամանակ աշխատա-
վարձի բարձրացման և բանվորների դրության լավացման
հույսերը միանդամայն կտրված եյին: Այդ մասին ե վկա-
յում Ս. Հ. Քոստանդրոսլովի աշխատանքի վիճակաղբական բաժնի:
1919 թվի հունիսի դեկուցադիրը, վորի մեջ ասված ե.

«Սովոր քայլայել և վոչնչացրել ե ամեն ինչ:
Անորոշ և անապահով կյանքը թույլ չի տալիս ժողո-
վըրդին ստեղծագործ և արդյունաբեր աշխատանքի
դիմելու: Այսպիսի սլայմաններում սլաշտալանել և
սլահալանել այս ու այն որենքը, վորով ասլահովված
լինի բանվորի կյանքն ու ապագան, շատ դժվար ե...
նույնիսկ դժվար ե վորոշել բանվորի՝ ընդհանուր սլե-
տության համար նվազագույն վարձարությունը,
քանի վոր որ-որի վրա վոփոխվում ե ու թանդա-
նում ե յերկրի տնտեսական կյանքը: Այսորված բա-

վարար որավարձը. արդեն անբավարար ե մի շաբաթից հետո»:

Միանդամայն հառկանալի յե, վոր ղաշնակցական հրեշների ստեղծած անտանելի, իրադրության մեջ որեցոր կյանքը գառնում եր անհուսալի: Հայաստանը անցյալում մութեր ու խավար, դյուղերն ու շենքերը լույս ելին ստանում ձեթի և սև նավթի ճրագներից, ելեկտրական լուսավորությունը հաղվաղյուտ և շատ աննշան եր Հայաստանում: Միայն խորհրդային իշխանության տարիներին աշխատավորության կուլտուրական ու յերջանիկ կյանքն ավելի ծաղկուն դարձվեց Իլիչյան լամպոչկաների սլայծառ լույսով: Այսոր ելեկտրականության միջոցով վոչ միայն աշխատում են մեր դործաբանները, հանքերը, արդյունաբերության, դյուղատնտեսության համապատասխան ձեռնարկությունները, այլև լուսավորված են մեր քաղաքներն ու շրջանների կենտրոնները, շատ ու շատ դյուղերն ու ավանները:

Այժմ ԽVIII կուս. համադրումարի վորոշման հիման վրա կառուցվում են մի շաբք վորքը ու միջակ ելեկտրոկայաններ: Այսպիսով մոտ ասլաղայում՝ Հայաստանի յեթե վոչ բոլոր դյուղերը, դոնե դյուղերի ճնշող մեծամասնությունը կստանան ելեկտրական լուսավորություն: Ելեկտրոներության կարողությունը հասնում ե պատկառելի չափերի. այսպես, որինակ,

1913 թվին՝ Հայաստանում յեղել ե 10 ելեկտրոկայան, 1919 թ. մնացել եր 7 ելեկտրոկայան, վորոնք տվել են 1,7 միլիոն կիլովատ եներդիա. 1938 թվին կար 45 ելեկտրոկայան, վորոնք յերկը տալիս են վիթխարի կարողության ելեկտրոներգիա:

Այսպիսով իրականացվել . ե մեծահանճար վլադիմիր իլյիչ կենինի հանրահայտնի լողունդը՝ «Խորհրդային իշխանություն պլյուս ելեկտրիֆիկացիա» հավասար ե սոցիալիզմի»:

Ստալինյան հնդամյակների տարիներին ստեղծված

ծանր ինդուստրիայի շնորհիվ սոցիալիզմի հաղթանակը անգերազարձորեն առահնովված և դյուլատնտեսության մեջ։ Մինչեւ խորհրդայնացումը Հայաստանի դյուղատնտեսությունը մանր էր, դանվում եր ցիրուցան, աղքատ ու իռշացած միճակում։ բոլոր լավ հողերը, հողերի 70%-ը գտնվում եր ալետության, կուլակների, վանքերի, յեկեղեցիների ու պինդորական աստիճանավորների տրամադրության տակ։ Հողերի փոքր ու անսլեշք մասը, ընդամենը 30%-ը գտնվում եր ամբողջ աշխատավոր դյուղացիության ձեռքին։ Արագարական միջոցներից զուրկ բատրակ ու չքափոր դյուղացիները ընկնելով կուլակների ու վաշխառուների ծանր պարագերի տակ, ստիպված ելին իրենց աննշան հողակտորը կամ արենդով տալ կամ ընդմիշտ վաճառել այդ աղբաւիներին, ու ամեն ինչից զուրկ կամ զնում ելին արդյունաբերական վայրեր կամ տեղում կուլակների մոտ չընչին մարդարությամբ քարշ ելին տալիս իրենց և իրենց ընտանիքների դառն ու չարքաշ որերը։

Մեր հանրապետության աշխատավոր դյուղացիությունը, հարևան հանրապետությունների դյուղացիության նման, իր վրեկությունը դառավ Հոկտեմբերյան հեղափոխության լուսառու ճառագայթների միջոցով։ Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության շարունակությունը հանդիսացող Նոյեմբերյան հեղափոխության շնորհիվ հայժողովուրդը, Հայաստանի աշխատավորությունը ունեցավ իր հարազատ իշխանությունը, հողն ու իրավունքները։

Աշխատավոր դյուղացիությունը հող ունենալով հանդիրք, միևնույն եր, մանր, ցիրուցան անտեսությամբ կտրիքից դուրս կալ չեր կարող, ունեոր ու յերջանիկ չեր կտրող ասլիւ։ Գյուղատնտեսության մասին խոսելիս, առաջավոր մարդկության մտքի վարոս Լենինը ասում էր։

«Յերեւ մենի առաջվա նման նուենի մանր տնտեսություններում, քեկուզ և վորապես ազատ բաղաժանիներ ազատ իոդի վրա, միևնույն է, մեզ ամիսուսացիներ ազատ իոդի վրա, միևնույն է, մեզ ամիսուսա-

փելի կորուսու և սպառնում» (Հատոր Խ, էջ 417),
և շարունակում.

«Մանք տնտեսությամբ մարդ կարիքից չի կա-
րող դուրս գալ» (Հատոր ԽIՎ, էջ 54). «Միայն ընդ-
հանուր, արտելային, ընկերային աշխատանիքի ոգու-
թյամբ կարելի յե դուրս գալ այն փակուղուց, ուր
ֆշել ե մեզ իմպերիալիստական պատերազմը»: (Հա-
տոր ԽIՎ, էջ 537):

Անմոռանալի առաջնորդի դործի հավատարիմ ու անձ-
նվեր շարունակող, աշխարհի աշխատավորության սիրելի,
հայ ժողովրդի բարեկամ մեծ Ստալինի ղեկավարությամբ
հիմնվեցին և ստեղծվեցին կոլխոզացին կարգեր: Հանրապե-
տության աշխատավոր դյուղացիությունը, մեր ընդարձակ
հայրենիքի բաղմամիլիոն դյուղացիության հետ միասին,
հաստատ համոզված լինելով կոլխոզացին կարգերի առավե-
լությանը, վորակես իր ունեոր ու յերջանիկ կյանքի միակ
ուղու, ընդդրկվեց կոլտնտեսություններում: Ահա թե ինչ-
պես են աճել կոլեկտիվ տնտեսությունները, նրանց մեջ ընդ-
դրրիված տնտեսությունների թիվը և տոկոսը:

1927 թվին յեղել և 6 կոլխոզ 346 դյուղական տնտեսու-
թյունը: 1928 թ. յեղել և 54 կոլխոզ, 1·085 տնտեսություն,
վորը կազմում եր 0,6%-ը: 1932 թվին՝ 897 կոլխոզ, 67·097
տնտեսություն, վորը կազմում եր 39,9%-ը: 1936 թվին՝
1·071 կոլխոզ, 163·663 տնտեսություն, վորը կազմում եր
86,6%-ը: 1939 թվին կա 1·078 կոլխոզ, 182·945 տնտեսու-
թյուն, վորը կազմում ե 96,1%-ը, չհաշված վերջին ամիս-
ներին, նոր ընդունված տնտեսությունները: Յեթե ել
գումարենք, կստացիի այն, վոր մենատնտեսները կկազմեն
ամենանաշան մասը: Տարեցտարի աճել և ցանքային դաշ-
տերի և կուլտուրական մշակույթների տարածությունը
այսպիս, որինակ,

1913 թվի ցանքային տարածությունը յեղել և 345·700

Հեկու . , ճնշող մեծամասնությունը հացահատիկային ցանքեր . 1919 թվին ցանքերի տարածությունն իջել է 82.700 հեկտարի , վորից հացահատիկ 78.400 հեկտար : 1928 թվին յեղել է 332 հազար հեկտար , վորից հացահատիկային 290 հազար 800 հեկտար : Այս տարի 438.900 հեկտար , վորից հացահատիկային 357.800 հեկտար . միանուամայն պարզ է տարրերությունը : Բնույթ և այն , վոր ամբողջ վարելահոգերի 0,4%-ը 1928 թվին , 92,6%-ը 1937 թվին , 97,6%-ը 1939 թվի 7-րդ ամսին դտնվում է կոլխոզների տրամադրության տակ : Այժմ միայն վարելահողերի 2,4%-ն է մնացել մենատնտեսներին . յեթե նկատի ունենանք 7-րդ ամսից մինչև 1939 թվի վերջը կոլխոզներում նոր ընդունված տնտեսությունների վարելահողերի միացումը , հետևապես վարելահողերն ամբողջությամբ կլինեն կոլխոզների տրամադրության տակ : Կարևորն այն է , վոր բավական խոշոր քանակությումը հողեր դրված են կուլտուրական մշակույթների տակ :

Որինակ բամբակի ցանքերի տարածությունը՝ 1919 թվի՝ համեմատությամբ , 1938 թվին աճել է 28,5 անգամ : Խաղողի այդի 1919 թվին յեղել է 4200 հեկտար , 1938 թվին՝ 14.200 հեկտար : Ծխախոտ 1919 թվին՝ 100 հեկտար , 1939 թվին՝ 3.500 հեկտար : Կարտոֆիլ 1919 թվին յեղել է 1800 հեկտար , 1939 թվին 12.300 հեկտար և այլն :

Այս թվերը ցույց են տալիս , վոր մեր կուսակցությունն ու իշխանությունը վոչ միայն ուշադրություն են դարձնում ցանքերի տարածությունների լայնացման վրա , այլև կուլտուրական մշակույթների տարածությունների ընդարձակման վրա :

Ստալինյան հնդամյակների տարիներին դյուռատնտեսությունը յենթարկվեց մեքենայացման . մեքենայացման և յենթարկման վոչ միայն հասկավոր ցանքերի մշակույթը .

այլև կուլտուրական մշակույթների (բամբակի, ծխախոտի, ճակնդեղի, այդիների) տարածությունները։ Անցյալի նախնադարյան հետամնաց գործիքները իսպառ վերացվել են գյուղատնտեսության միջից, վորոնց վոլխարինել են գյուղատընտեսության ժամանակակից առաջավոր մեքենաները ու գործիքները, այնպիսի մեքենաներ, վորոնցից վորոշ քանակությամբ ունենալը կենինը ֆանտազիա յեր համարում։

Խոսելով զյուղատնտեսության մեքենայացման և միջակ գյուղացիությանը կոմունիզմի մեջ գրավելու մասին, Վ. Ի. Լենինը հետեւյալն եր ասում։

«Միջակ գյուղացիությունը կոմունիստական հահասարակության մեջ միայն այն ժամանակ մեր կողմը կլինի, յերբ մենք քերեացնենք ու բարելավենք նրա կյանքի տնտեսական պայմանները։ Յեթե մենք կարողանայինք վաղը տալ 100·000 առաջնակարգ տրակտոր, դրանք ապահովեյինք բենզինով, դրանք ապահովեյինք մենավարներով (դուք հիանալի գիտեք, վոր առայժմ սա ֆանտազիա յե), ապա միջակ գյուղացին կասեր։ «Յես կոմունիայի կողմն եմ» (այսինքն՝ կոմունիզմի կողմը)։ Բայց այդ անելու համար հարկավոր ե նախ հաղթել միջազգային բուրժուազիային, հարկավոր ե հարկադրել նրան, վոր տա մեզ այդ տրակտորները, կամ քե չե մեր արտադրողականությունը այնքան պետք ե բարձրացնել, վորպեսզի մենք ինքներս կարողանանք դրանք հայթայթել։ Միայն այս կերպ նիշտ դրված կլինի այդ հարցը։ (Հատոր XXIV, էջ 170)։

Այն ժամանակվա ֆանտազիան այժմ իրականություն ե դարձել գյուղատնտեսության մեջ։ Հարյուր-հազարավոր տրակտորներ, կոմբայններ, կալսիչներ և այլ տեսակի մեքենաներ ու գործիքներ արտադրվում են մեր սեփական գործարաններում։ Միայն Հայաստանում գյուղատնտեսության մեջ 1938 թ. կար 1431 տրակտոր, 302 կալսիչ,

192 կոմբայն, 728 բեռնատար ավտոմեքենա և այլ մեքենաներ:

1939 թվին կա 32 ՄՏ կայան, վորոնք ունեն 1284 տրակտոր, 245 կոմբայն, 276 կալսիչ, վորոնց ընդհանուր հզորությունը՝ վերածված ձիու ուժի՝ պատկառելի չափերի յե հասնում: Բայ 1938 թվի տվյալների՝ կոլխոզների 65,1%-ը սպասարկում են ՄՏ կայանները: Այժմ վարի, հերկի, հնձի, կալսելու խոշոր ժամկետ կատարվում է մեքենաների միջոցով:

Խորհրդային իշխանության տարիներին ցանքերի տարածության լայնացման հետ միասին ավելացել ե վոռոգելի տարածությունների չափը: 1919 թվին վոռոգվում եր 60·000 հեկտար, իսկ 1939 թ. վոռոգվեց 173·300 հեկտար: Միայն 1938—39 թվերին 9 շրջաններում կառուցվել ե 27 ջրանցք, վորոնք վոռոգել են ահագին տարածություններ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո կառուցվել են՝ Վաղարշապատի շրջանի Լենինի անվան ջրանցքը, վոռոգում ե 1800 հեկտար. Շիրակի ջրանցքը, վոռոգում ե 11·000 հեկտար. Այդու լճի սիստեմը՝ 5000 հեկտար. Սարդարապատի ջրանցքը՝ 7000 հեկտար, վերջացվելու վրա յեն ընկեր Ստալինի անվան ջրանցքի (Դոերի վոռոգման սիստեմի) աշխատանքները, վորը վոռոգելու յե 13·550 հեկտար տարածություն:

1940 թվին ավարտվելու յեն Յերևան—Աշտարակ, Բասսարդեչարի (Մաղրա), Վաղարշապատի, Ղափանի, Կոտայքի, Ղամարլուի, Սպիտակի և շատ ուրիշ ջրանցքները, վորոնց միջոցով վոռոգվելու յեն դարերից ի վեր անջուր մնացած հողամասեր: Դրանք դառնալու յեն ինչպես հացատիկի, նույնպես և բամբակի, ծխախոտի, ճակնդեղի, կարտոֆիլի, մրգատու այշիների բերքատատ դաշտեր, մեր աշխատավորության համար լիառատ յեկամտարեր որյեկտներ: Գյուղատնտեսության մեքենավորման, ջրովի տարա-

ծությունների ավելացման ու մեր աշխատասեր կոլխոզներների քրտնաջան աշխատանքի չնորհիվ՝ մեծ չափերի յե հասել բամբակի, խաղողի, ծխախոտի, հացահատիկի, կարտոֆիլի և այլ կուլտուրաների ըերքատվությունը։ Այսպես, որինակ,

1919 թվին հացահատիկի միջին ըերքը յեղել է 4,1 ցենտներ։ 1928 թվին՝ 4,6 ցենտներ, 1937 թվին՝ 9,2 ցենտներ։ Բոլոր տվյալները կան, վոր այս տարի նույնական ըերքատվությունը ավելի բարձր է լինելու։ Բերքատվության բարձրացման հետևանքով տարեցտարի աճել է կոլխոզների յեկամուտը։ Յեթե 1936 թվին կոլխոզների համախառն յեկամուտը կազմում էր 175 միլիոն 96 հազար 300 ռուբլի, 1938 թվին հասավ 234 միլիոն 571 հազար ռուբլու։ 1936 թվին մեկ կոլտնտեսականի համախառն յեկամուտը կազմում էր 1108 ռուբլի, 1938 թվին այն կազմում էր 1356 ռուբլի։

Տարեցտարի աճում է միլիոնատեր կոլխոզների թիվը։ 1936 թ. յեղել է այդպիսի 18 կոլխոզ, 1937 թվին՝ 29 կոլխոզ, 1938 թվին՝ 41 կոլխոզ։ Բոլոր տվյալներն ասում են այն մասին, վոր այս տարի միլիոնատեր կոլխոզների թիվը (մի քանի անգամ ավելի կլինի։ Ահա միլիոնատեր կոլխոզներից մի քանիսը։

Դամարլուի շրջանի՝ Նորաշեն, Արտաշատ, Դարդալու, Նովրոզլու, Այշեստան, Յուլիա, Բեղաղլու, Ն. Դամարլու, Բուրաստան, Դալար և շատ ուրիշ գյուղերի կոլխոզները։

Հոկտեմբերյանի շրջանի՝ Հոկտեմբերյան, Գեղըլու, Սովետական, Բամբակաշատ, Կուղիուղան, Արմավիր, Մ. Շահրիար, Փ. Շահրիար և այլ գյուղերի կոլխոզները։

Վաղարշապատի շրջանի՝ «Անաստված», Փարաքար, Վաղաղատ, Արշալույս, Այնալու, Խաթունարխ, Ասմաղար և այլ գյուղերի կոլխոզները։

Զանգիբարի շրջանի՝ Զանդիբար, Զահմամաթ, Թաղաղար

Աշտարակի շրջանի՝ Աշտարակ, Վոսկեվաղ, Ռշական:
Վեդիի շրջանի՝ Արարատ, Ռեհանլու:
Կալինինոյի շրջանի՝ Կալինինո և այլ գյուղերի կոլխոզ-
ները:

Մեր հանրապետության միլիոնատեր և մնացած կոլխոզ-
ները խոշոր աշխատանք կատարեցին Համամիութենական
գյուղատնտեսական ցուցահանդեսի պահանջները լրացնելու
ուղղությամբ: 1939 թվին ցուցահանդեսին մասնակցել են
170 կոլխոզներ, 5 սովխոզներ: Ինչպես հացահատիկի, բամ-
բակի, ծխախոտի, այգիների, կարտոֆիլի, խոտաբույսերի
բերքատվությունը բարձրացնող, անասնապահությունը զար-
գացնող, նույնալես և բերքահավաքը, վարը, ցելը բարձր
ցուցանիշներով կատարող տրակտորիստ, կոմբայնավար ու
մասնագետ ստախանովականներից և հարվածայիններից՝
1939 թվի ցուցահանդեսին մասնակցել են 2862 հոգի: 1940
թվի համար ամենուրեք ստացվում են դիմումներ:

Այս վիաստերը ցույց են տալիս, վոր մեր կոլխոզներն
ու կոլխոզնիկները սովորված են բոլոր տեսակի կուլտու-
րաների բերքատվությունը բարձրացնելու, անասնապահու-
թյունը զարդացնելու, մեր հայրենիքն ավելի հզորացնելու և
անառիկ դարձնելու բուռն ցանկությամբ: Այդպիսի ցան-
կությունները դործի վերածելու արդյունքն ե, վոր մեր
կոլխոզնիկների յեկամուտները չտեսնված չափերի յեն հաս-
նում: Որինակ՝ Վաղարշապատի շրջանի «Անաստված» կու-
խողի անդամ, նախկին բատրակ Պետրոս Ասլանյանը իր ըն-
տանիքով այս տարի վաստակել է 1040 աշխոր, վորի դի-
մաց ստանալու յե 18729 ռուբլի միայն դրամ, 1500 կիլո հա-
ցահատիկ, 312 կիլո խաղող, 820 լիտր շիռա, 240 լիտր գի-
նի, 173 լիտր ողի:

Նույն կոլխոզի անդամ, նախկին ծայրահեղ Հքավոր
Արտօշես Ղազարյանը այս տարի ընտանիքով վաստակել է
820 աշխոր, վորի դիմաց ստանալու յե 14436 ռուբլի միայն

դրամ, 1200 կիլո հացահատիկ, 240 կիլո խաղող, 605 վառ
շիրա, 230 վառ գինի, 137 լիտր ողի, չհաշված իր անձնա-
կան տնամերձից ստացվածը:

Համարլուի շրջանի Գյուղական գյուղի կոլխոզի ան-
դամ Հարուբյուն Ստեփանյանը միայն ինքը 1938 թվին
վաստակել է 389 աշխոր, վորի դիմաց ստացել է միայն
դրամ 7556 ռուբլի, խաղող 1600 կիլո, չոր միրդ 40 կիլո և
այլ մթերքներ: 1939 թվին մասնակցել է գյուղատնտեսա-
կան ցուցահանդեսին:

Զանդիրասարի շրջանի Քյալարա գյուղի կոլխոզի ան-
դամ Վարդգես Սիմոնյանը միայն ինքը 1938 թվին վաստա-
կել է 420 աշխոր, վորի դիմաց ստացել է 4620 ռուբ. դրամ,
210 կիլո հացահատիկ, 294 կիլո բրինձ և այլ մթերքներ,
մասնակցել է գյուղատնտեսական ցուցահանդեսին:

Համարլուի շրջանի Արտաշատ գյուղի կոլխոզնիկ Գուր-
գեն Յեղիգարյանը 1938 թվին միայն ինքը վաստակել է 295
աշխոր, ստացել է 3304 ռուբլի միայն դրամ, 1032 կիլո հա-
ցահատիկ, 150 կիլո խաղող, 295 լիտր գինի, 30 լիտր ողի և
այլ մթերքներ:

Հոկտեմբերյանի շրջանի Սովետական գյուղի կոլխոզի
անդամ Սարգիս Հակոբյանը 1938 թվին միայն ինքը վաստա-
կել է 576 աշխոր, ստացել է դրամ 7298 ռուբլի, 462 կիլո
հացահատիկ և այլ մթերքներ:

Այսպիսի կոլխոզնիկների թիվը շատ-շատ է մեր դաշ-
տային, նախալեռնային ու լեռնային շրջաններում: Հենց դա-
ել նշանակում է մտավոր և ֆիզիկական աշխատանքի տար-
րերության վերացում, դա նշանակում է ունեոր ու կուշ-
տուրական կյանքով ապրել: Նախկին ընչափուրկ հազարա-
վոր գյուղացիներ կոլխոզային կարգերի շնորհիվ ապրում են
բերկրալից կյանքով, շատ կոլխոզնիկներ ունեն փափուկ
ժահճակալներ, պատեփոն, ռադիո-պրիումնիկ, կարի մե-
քենա, բուֆետ, շիֆոներեկա և այլ տեսակի կահիարանիք:

Այդ բոլորի, մեր ուրախ ու յերջանիկ կյանքի համար պարտական ենք մեր մայր կուսակցությանը, մեր սիրելի Ստալինին:

Ժողովրդի թշնամիների, աջ-արտօնվատական-բուխարի-նական-ռազնակցության բուրժուացիոնալիստական իժերին ջախջախելու հետ միասին ձեռնարկվեց վնասարարության հետևանքների լիւլիրացիան և վերջին յերկու տարվա ընթացքում ժողովնետության բոլոր բնակավանների, հատկապես գյուղատնտեսության, և անասնապահության զարգացումը կատարվեց խոշոր հաջողությամբ:

Խոշոր չափով աճել է անասնապահությունը. 1932 թվին խոշոր յեղջյուրավոր անասուն ընդամենը յեղել է 685·400 հատ, 1939 թվին՝ 755·400 հատ: Վոչխար 1932 թվին յեղել է 848·400 հատ, 1939 թվին այդ քանակը հառել է մեկ միլիոն 290·400 հատի: Կոլխոզներում ավելացել է ֆեռմաների թիվը, որինակ՝

Ֆեռմաների անունները	1932 թ.	1936 թ.	1938 թ.	1939 թ.
Կովարուծական	116	598	605	971
Վոչխարարուծական	114	492	546	875
Կողարուծական	32	113	190	315
Չիարուծական	6	166	427	494
Կառն	—	336	412	63
Ընդամենը	268	1·729	218	2·718

Այս թվերը ցույց են տալիս մեր սոցիալիստական գյուղում անասնապահության զարդացման տեմպը, կոլխոզների ապրանքային ֆերմաների անասունների դլխաքանակի ավելացումը: Պարզ է, վոր կոլխոզներում յեղած հանրային խոշոր յեղջյուրավոր անասունների, ձիերի, խողերի, վոչխարների խոշոր մասը դժոնվում է ֆերմաներում, ինչպես նաև անասնապահական խորհրդային տնտեսություններում: Ան-

առների վորոշ մասը դանվում է կոլխոզնիների և անհան-
մասը մենատնտեսների ձեռքում:

Մեր կուսակցության XVIII համադումարի վորոշումնե-
րի ճշգրիտ իրազործումը դարձել է Հայաստանի կուսակցա-
կան և անկուսակցական բոլշևիկների սլատվի գործը: Բացի
խոշոր ու մանր յեղջյուրավոր տնառունների դլխաքանակի
ավելացումից, պայքարը տարվում է անտունների ցեղի
աղնվայման, կաթնամսաբարդապության բարձրացման
ուղղությամբ: Մասսայական յերեսությ է դարձել կովերի,
ձիերի, վոչխաբների մետիսացումը:

Թալինի շրջանի Աղբյաման գյուղի կոլխոզի վոչխաբա-
րուծական ֆերման ամբողջապես յենթարկվել է մետխաց-
ման, չունենալով վոչ մի կորուստ: Ավելացել է կաթնա-
բարդապությունը: Փերմայի վարչիչ՝ աշխատանքի հերոս
Սրալ Գրիգորյանի շնորհիվ՝ Ն. Բայազետի շրջանի Աղղիբերի
վոչխաբարուծական ֆերման այս տարի 315 վոչխար լրիվ
յենթարկել է մետխացման (ոամբուլյա ցեղով): Ոամբուլյա
վոչխաբների բողատվությունը այնքան բարձր է, վոր այդ
կոլխոզը թողի պետական պլանները կատարելուց դառ, 220
կիլո ըուրդ աղաս մթերման կարգով հանձնել է պետու-
թյանը: Այդ տևակի վոչխաբների մի խոյից ստացել է 10 կի-
լո ըուրդ, սկսած դնելով այդ մեկ խոյի ըրդի արժեքը
կազմել է 270 ռ.: Ֆերման չի ունեցել վոչ մի կորուստ,
ընդհակառակը 220 վոչխարից ստացել է 235 դառ: Ֆերմայի
վարչիչ՝ Շուբյուր Ա. Բարսովին և կոլխոզի նախագահ՝ Հա-
կոբ Հովսեփյանը աշխատում են, վարովեսդի 1940 թվին Փեր-
ման մասնակցի գյուղատնտեսական ցուցահանդեսին:

Այդպեսի կոլխոզների ֆերմաների քանակը հանրայե-
տության մեջ մեծ չափանիկ յէ հասնում, վորոնց առաջավոր
անառաջահերը բուշեիկորեն պայքարում են անթերի կա-
տարելու XVIII կուս: Համադումարի պատմական վորոշում-
ները:

Այս տարիվա լիառատ բերքից հաջողությամբ կատարվել են մթերումների պետ. պարտավորությունները: Բամբակացան, ծխախոտագործ ու այդեղործ շրջանների կուսակցական և անկուսակցական բոլշևիկները՝ վոչ միայն պայքարում են ցանքերի տարածությունը մեծացնելու, բերքատվությունը բարձրացնելու, այլ և սկսությանը ժամանակին, վորակով ու մեծ քանակությամբ մթերքներ հանձնելու համար: Մեր բամբակացան ու այդեղործ շրջանները ինչպես անցյալ, նույնպես և այս տարի սկսությանը հանձնեցին բարձր վորակով բամբակ, խաղող ու այդեպատվածներ: Այդ նույն բանը կատարվում է ծխախոտի, հացահատիկի, կարտոֆիլի և այլ մթերքների նկատմամբ: Հոկտեմբերյանի շրջանի կուսակցական և անկուսակցական բոլշևիկները սկայքարում են, ամենայնեկամտաբեր կուլտուրայի՝ «գերանի» ցանքերի տարածությունը լայնացնելու համար, մի կուլտուրա, վորի մշակման համար տեղում կառուցվում է գործարան՝ ստացված բերքը մշակելու համար:

19 տարիների ընթացքում չտեսնված տեմպերով են աճել Հայաստանի ժողովրդական լուսավորությունը: Մեր կուսակցությունն ու իշխանությունը բոլոր տեսակի սկայմաններ ստեղծել են մեր աշխատավորությանը և մատաղ սերընդին կոմունիզմի վողով դաստիարակելու համար: Բավական ենչել, վոր 1933 թվից մինչև 1938 թվիը կառուցված ե 369 դպրոց, վորից 51-ը քաղաքներում, 318-ը շրջաններում, չհաշված անցյալում յեղած և այս տարիվա կառուցվածները: Միայն 1939—40 ուսումնական տարում՝ սկսական և տեղական բյուջեներից 142 միլիոն 412 հազար 300 ռուբլի հատկացված և ժողովրդական լուսավորությանը, վորն անցյալ տարիվա համեմատությամբ տալիս են 19,5% աճ: Այս գումարի հաշվին մեր Հանրապետության մեջ գործող 1159 դպրոցներում սովորում են 296 հազար յերեխաներ, ԲՈՒՀ-երում և տեխնիկումներում՝ 11000, ման-

կատներում՝ 1·400, մանկապարտեզներում 8000, մեծահասակների դպրոցներում (ներառյալ նաև անդրադետների ու կիսադրադետների դպրոցներում) 83000, ուսուցիչների վերապարաստման կուրսերում՝ 16000։ Բնդամենը մեր Հանրապետության մեջ սովորում են 401 հաղար մարդ, վորք կազմում ե Հայաստանի ազգաբնակության 33%-ը։ Նշված դումարի հաշվին կառուցվում են՝ 82 նոր դպրոցներ, բացվում են գյուղերում՝ 406 խրճիթ-ընթերցարաններ, քաղլուսհիմնարկներ, դրադարաններ և այլն։

Դաշնակցության տիրապետության տարիներին Հայաստանում չեն յեղել ԲՈՒՀ-եր և տեխնիկական կումներ։ 1927—28 թ.թ. յեղել ե 3 ԲՈՒՀ 1640 ուսանողներով, 12 տեխնիկական կում 1676 ուսանողներով։ 1938—39 ուս. տարում կար 8 ԲՈՒՀ 5696 ուսանողներով, 63 տեխնիկական 10·433 ուսանողներով։

Այժմս Հայաստանում դասավանդում են 10·564 դասախոսներ և ուսուցիչներ, վորոնք մեր յերիտասարդությանը և յերեխաններին կրթում են կոմունիզմի վողով։ Դրանք ժողովրդական կրթության ոլատվայուր դորձը կատարում են բարձր սլատասխանառությամբ։ Նրանցից 54 հոգի այս տարի սլարդեատրվեցին ԽՍՀՄ-ի շքանշաններով։

Խորհրդային հղոր կառավարությունը ամեն տեսակի նյութական, կուլտուրական սպայմաններ ստեղծել ե մեր ժողովրդական կրթության հրամանատարների համար։

Դաշնակցական հրեշները ինչպես սոսկալի պայմաններ ստեղծել ելին Հայաստանի ժողոտնեսության բոլոր բնագավառներում, նույնպես և կրթության բնագավառում աշխատողների համար։ այն ժամանակական ուսուցիչները (ծաղրանքի յենթակա վարժապետները) աղքատիկ ու սոսկալի վատ սպայմաններումն ելին ասլրում։ Այդ մասին ե վկայում 1920 փետրվարի 7-ի բողոքը՝ ուղղված Հայաստանի լուսավորության նախարար պլ. Նիկողայոս Աղբալյանին, վորի մեջ ասված ե.

«Եջմիածնի Ամերիկյան վորքանցների Վարչության կարգադրության համաձայն մեզ հրաժարված համարեցին մեր պաշտոնից, մինչդեռ մենք գրավոր հրավիրված ենք մինչև 20 րվի ոգոստոսի 31-ը։ Ամերիկյան վորքանցների Վարչության այդորինակ բայլը գտնելով միանգամայն անարդարացի և մի անողոք դատավճիռ մեր և մեր ընտանիքների նկատմամբ,

Մենք՝ ներքո ստորագրողներս դիմելով Զեզ, Խընդրում ենք նկատի ունենալ 1) մեր ձեռքի տակ սովորող մատաղ սերմադի դաստիարակության գործը, վոր անշուշտ սուստելու յէ այս պարագայում։ 2) Մեր և մեր ընտանիքների համար ստեղծված նյութական սոսկալի ծանր դրությունը։ 3) Մենք տարեկեսին արածելու լինելով պաշտոնից, վոչ մի տեղ հույս չկա աշխատանիքի ընդունվելու։ Խնդրում ենք ըստ սայմանագրի, մեզ քողմանք մեր պաշտոնում մինչև 20 րվի ոգոստոսի 31-ը, վորից հետո տեսնենք ինչ կլինի կացությունը»։

Դիմողներ՝

1. Խուսիկ Ճուղուրյան
2. Արշանուշ Հովսեփյան
3. Մարգարիկ Գարբիելյան
4. Մարգարիտ Տեր-Գրիգորյան և այլն։

Դիմողները ինչքան ել ըովոքելին, միւսույն եր, չեյին դանի աշխատանք, իրավունք, լավ նյութական պայմաններ։ Այդ նրանց ավելց Նոյեմբերյան պանծալի հեղափոխությունը, հղոր ու անսպասելի կարմիր ըանակը։

Անցյալի համատարած անդրադես Հայաստանը զուրկ եր թերթերից, ժուռնալներից, դրանքից, բրոցյուրներից, դրանց վորտարեն անարդել դործում եյին դաշնակցական լուրջ մեծ ու վորք աստիճանավորների մտրակը, անըներ-

Ների ու հոգևոր «Հայրեցի» բժամիտ ու խավարամու քարոզները:

Խորհրդային իշխանության տարիներին լույս են տեսնում կենտրոնական 10 անուն թերթեր, վորից՝ 7 հայկական, 2 ռուսական, 1 աղբբեջանական։ 1936 թվին լույս տեսած 36 անուն թերթերի փոխարեն այժմ լույս ե տեսնում 50 անուն թերթ և 8 անուն ժուռնալ տարեկան ամելի քան 45 միլիոն ընդհանուր տիրաժով։

Լույս են տեսնում բաղմատիրած պատի թերթեր՝ կուխոզներում, դրծարաններում։ 1938 թվին դործում եյին 180 շարժական կինոներ, 177 կոլխոզային ակումբներ, 5 կուլտուրայի և հանդստի սրարկեր։

Կենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, մեծ Ստալինի հայրական հոգատարությամբ ծաղկել է Հայաստանի ձեռվ ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Խորհրդային հայ դրողները, դրամատուրգները, կոմպոզիտորները, նկարիչները, յերաժշտագետները, նվագողները, Խորհրդային Հայաստանի յերիտասարդ կաղրերը կենդանացրել են հայ ժողովրդի տարիներ շարունակ ստեղծած կուլտուրան, արվեստը, դրականությունը, յերգը, յերաժշտությունը և այլն։

Յարիզմի ու Դաշնակցության կողմից քայլայված, ավերված Հայաստանում կուլտուրայի արվեստի մասին խոսելու ավելորդ եր։ Անցյալում Հայաստանում, նույնիսկ նաև Յերևան քաղաքում, չի յեղել վոչ թատրոն և վոչ ել կինո։ Այդ մասին ե վկայում դաշնակցական հանրային կրթության և արվեստի նախարարի 1920 թվի որինադիմը՝ ուղղված նախարարների խորհրդին, վորում առված ե։

«Մեր մայրաքաղաքը շատ աղքատ է կուլտուրական նշանակություն ունեցող կրթիչ հաստատություններով, առանձնապես զղալի յե թատրոնի բացակայությունը։ Նախարարությունս մտադիր է այս աշնանից ստեղծել այնպիսի պայմաններ, վոր հնարավոր

լինի Յերևանում ունենալ մշտական դերասանական խումբ, վորը կծառայեր թէ մտավորական և թէ հասարակ ժողովրդի պետքերին։ Այդ նպատակի իրադրութման համար հարկավոր է ունենալ առանձին հարմարեցրած շենք, վորի դահլիճը հնարավոր լինի վերածել բեմի։ Նախարարությունս նկատի ունի պառլամենտի կողմից այժմս բռնված շենքը։

Հանրային կրթության արվեստի նախարար
(Ստորագրություն)»։

(Պետ-արխիվ, գործ № 201, էջ 179)։

Միանդամայն պարզ է, մեկնաբանության կարիք չկա, վոր Յերևան քաղաքը զուրկ էր թատրոնի շենքից, մշտական դերասանական խմբից։ Այժմս Յերևանում կան Պետական թատերական, Ռազերայի ու Բալետի 5 խոշոր և հարմար շենքեր իրենց մշտական և հիանալի դերասաններով։ Յերեվանում դործում են Ռուսական և Աղբբեջանական Պետական թատրոններ։ Այժմս Հայաստանում դործում են կենտրոնական ու շրջանային 25 թատրոններ՝ հայկական, ռուսական, աղբբեջանական և Խորհրդային Միության մեջ միակ՝ Աղջաղի շրջանի քրդական թատրոնը։

Հայաստանի թատրոններից աչքի յեն ընկնում Յերևանի Սունդուկյանի անվան կարմրադրուց թատրոնը, Սպենդիարովի անվան ռազերայի և բալետի թատրոնը, Լենինականի և շատ ուրիշ թատրոնները, վորոնք տվել են մի շաբք հրաշալի ներկայացումներ։

Հայաստանում դործում են՝ 250 ինքնադրուծ խմբակներ, 250 յերաժշտական-լարային, 103 պարի, 12 յերդի և պարի, 40 յերդեցիկ, 30 մանղոլինիստների, 50 փողային, 3 ջազի նվազախմբեր և 3 աշուղական անսամբլներ։

Հայաստանի արվեստի՝ վերջերս Մոսկվայում տեղի ունեցած տասնորյակը ցույց տվեց, վոր Հայաստանի կուլտուրան և արվեստը հասցված են բարձր աստիճանի։ Մոսկ-

լինի Յերևանում ունենալ մշտական դերասանական խումբ, վորը կծառայեր թե մտավորական և թե հասարակ ժողովրդի պետքերին։ Այդ նպատակի իրադրուծման համար հարկավոր է ունենալ առանձին հարմարեցրած շենք, վորի դահլիճը հնարավոր լինի վերածել բեմի։ Նախարարությունս նկատի ունի պառլամենտի կողմից այժմս բռնված շենքը։

Հանրային կրթության արվեստի նախարար

(Ստորագրություն)։

(Պետարևիլ, դործ № 201, էջ 179)։

Միանդամայն պարզ է, մեկնաբանության կարիք չկա, վոր Յերևան քաղաքը զուրկ էր թատրոնի շենքից, մշտական դերասանական խմբից։ Այժմս Յերևանում կան Պետական թատերական, Ռազերայի ու Բալետի 5 խոշոր և հարմար շենքեր իրենց մշտական և հիանալի դերասաններով։ Յերևանում դործում են Ռուսական և Աղբբեջանական Պետական թատրոններ։ Այժմս Հայաստանում դործում են կենտրոնական ու շրջանային 25 թատրոններ՝ հայկական, ռուսական, աղբբեջանական և Խորհրդային Միության մեջ միակ՝ Աղյաղի շրջանի քրդական թատրոնը։

Հայաստանի թատրոններից աչքի յեն ընկնում Յերևանի Սունդուկյանի անվան կարմրադրուց թատրոնը, Սպենդիարովի անվան ռազերայի և բալետի թատրոնը, Լենինականի և շատ ուրիշ թատրոնները, վորոնք տվել են մի շարք հրաշալի ներկայացումներ։

Հայաստանում դործում են՝ 250 ինքնակործ խմբակներ, 250 յերաժշտական-լարային, 103 պարի, 12 յերդի և պարի, 40 յերդեցիկ, 30 մանդոլինիստների, 50 փողային, 3 ջազի նվադախմբեր և 3 աշուղական անսամբլներ։

Հայաստանի արվեստի՝ վերջերս Մոսկվայում տեղի ունեցած տասնորյակը ցույց տվեց, վոր Հայաստանի կուտուրան և արվեստը հասցված են բարձր աստիճանի։ Մոսկ-

վայի, Աննինի շքանշանակիր Պետական մեծ թատրոնի բեմի վրա տաղանդավոր հայ ժողովրդի՝ կուլտուրայի ու արվեստի վարչետները հիանալի կերպով ցուցադրեցին Սպենցիարովի «Ալմաս» , Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» , Ա. Տիգրանյանի «Անուշ» ոպերաները, հայկական առաջին «Յերջանկություն» բալետը, վորով գրել և կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը :

Ապերային և բալետի ներկայացումներ տրվեցին յերկուական անդամ և ամեն անդամ մասնակիցների սրահանջով կրկնվեցին մի քանի յելույթները, բոլոր ներկայացումները արժանացան մոսկվացիների բուռն ու խանդավառ վերաբերմունքին : Տասնորյակը յեղրափակվեց՝ ժողովրդական դործիքների անսամբլի, հայկական աշուղական յերդի անսամբլի, ժողովրդական յերդի ու պարի անսամբլի, Պետական յերդեցիկ կազելայի, Զաղորկեստրի՝ Հայկական ԽՍՀ վաստակավոր անսամբլի, Ա. Ա. Սոլենովիարովի անվան թատրոնի սիմֆոնիկ որկեստրի, Հայկական Պետական Հայֆիլհարմոնիայի սոլիստների յելույթներով :

Ինչպես ոպերայի և բալետի ներկայացումներին, նույնպես և տասնորյակի յեղրափակիչ համերդին, վորոնք հանդիսացան ազդային կուլտուրայի ծաղկման վառ ցուցաբուժը, շարունակ ներկա եյխն ընկեր Ստալինը և նրա համարիմ դինակիցները :

Հայ ժողովրդի ստեղծադործական արվեստի և նրա կատարողների մասին Համեկոմիտեսի կենտրոնական «Պրագրամ» իր հոկտեմբերի 20-ի առաջնորդողում հետևյալ դնաշատականն է տալիս .

«Ապարդյուն կլիներ փորձել այստեղ թվարկելու հայկական արվեստի բոլոր փայլուն վարպետներին : Նրանք շատ են և որեցոր դատնում են ավելի ու ավելի շատ : Խորհրդային Հայաստանի ծաղկումն իրու վոր հոյակաս է : Մեծ Խորհրդային Միաւրյան

բոլոր հանրապետությունները հպարտանում են իրենց հիանալի ժույք Հայաստանով :

Փառք հայ ժողովրդին, փառք նրա մեծ արվեստին, փառք ու վողջույն Հայաստանի արվեստի աշխատավորներին» :

Հայ ժողովուրդը լի յե խոր յերախտազիտության զգացմունքով դեպի այդ հաղթանակների վողեշնչող ու դեկավարող մեծ Ստալինը, վորի հայրական ձեռքը յերկիրը հասցըց յերջանկության :

Լենինյան-ստալինյան ազգային ճիշտ քաղաքականության, սիրելի Ստալինի հայրական հոգատարության արդյունքն և հայ ժողովրդի և Հայաստանի կուլտուրայի ու արվեստի այդ աստիճան ծաղկման դործը : Մեր սլանծալի կուսակցությունն ու Խորհրդային հղոր պետությունը ինչպես բոլոր ազգային փոքրամասնությունների, նույնպես և հայ ժողովրդի կուլտուրայի ու արվեստի զարդացման համար խոշոր պայմաններ ու հնարավորություններ են ստեղծել ու ստեղծում, ստալինյան հոգատարությամբ են գնահատվում կաղըրերը : Այդ բանի փայլուն ապացույցն ե՝ տասնորյակի մասնակիցներին կուսակցության ու կառավարության դեկավարների կողմէց Կրեմլում ընդունելը, նրանցից 134 հոգու և ՍՀՄ-ի շքանշաններով պարզեատրելը, արվեստի աշխատողների համար ընակելի շենք կառուցելու նախատակով 2 միլիոն ռուբլի, հայկական կոնսերվատորիայի շենք կառուցելու համար 4 միլիոն ռուբլի հատկացնելը, տասնորյակի բոլոր մասնակիցներին յերկու ամսվա աշխատավարձով պարզեատրելը և այլն :

Ահա թե ինչպես են դնահատվում կուլտուրան, արվեստը և նրա փայլուն կատարողները : Հայաստանի աշխատավորությունը տասնորյակի մասնակիցներին բարձր խանդակառությամբ ճանապարհեց դեպի մեր անծայրածիր հայրենիքի մայրաքաղաքը՝ Մոսկվա, մեծ հետաքրքրությամբ եր հետեւում տասնորյակի ընթացքին, մեր արվեստի վայ-

լուն կատարողներին։ Մայրաքաղաքի աշխատավորությունը բուռն ցնծությամբ դիմավորեց տասնորյակի Մոսկվայից վերադարձած մասնակիցներին, վորոնք կուսակցության ու կառավարության արժանի դնահատականին, Մոսկվայի աշխատավորության սիրո և հարզանքին արժանացած, վերադարձան։

Լենինի շքանշանով պարզեատրված Հայկանուշ Դանիելյանը և ուրիշները իրենց յելույթներում խորը յերախտապիտության զգացմունքով նշեցին մեր կառավարության ու սիրելի Ստալինի կողմից ստեղծված այն խոչըն հնարավորություններն ու հոգատարությունը, վորի շնորհիվ կուլտուրան և արվեստը հասցվել ե այդպիսի վարձու աստիճանի, նշեցին Մոսկվայի աշխատավորության սիրավելու վերաբերմունքը հանդեպ հայ ժողովրդի՝ հանձինու նրա արվեստի աշխատողների։

Ընկ. Դանիելյանը և ուրիշները տասնորյակի ընթացքում ձեռք բերած հաջողությունները շատ իրավամբ համարեցին Հայկոմիուսի կենտրոմի ու անձամբ ընկ. Հարությունյանի ամենորյա ողնության ու ղեկավարության արդյունքը։

Մի ամիս առաջ խորհրդային բոլոր ժողովուրդները տոնեցին Սասունցի Դավիթի հաղարամյակը։ Հաղարամյակին նվիրված զրականությունը լույս տեսավ հարյուրհաղարավոր որինակներով, թարգմանալած ԽՍՀՄ-ի ժողովուրդների լեզուներով, և տարածվեց մի քանի որ վա ընթացքում։ այդ տոնը հանդիսացավ ստեղծագործ ու տաղանդավոր հայ ժողովրդի կեղեքիչների ու հարստահարողների դեմ մի քանի հարյուրամյակների ընթացքում շարունակ մղած սլայքարի հավերժացումը։ Այս յերկու որինակները հայ ժողովրդի հերոսական պայքարի ու ստեղծագործական աշխատանքների ցուցադրումն են։ Ահա ինչու լայնածավալ Խորհրդային յերկրի բազմազդ և բազմամիլիոն ժողովուրդներն այդքան մեծ հետաքրքրությամբ ու հըմ-

վանքով գիմավորեցին ինչպես Սասունցի Դավիթի 1000-ամյակը, նույնպես և հայկական արվեստի տասնորյակը։ Աւախ ու յերջանիկ հայ ժողովրդի և Հայաստանի աշխատավորության մեկ միլիոն 281 հազար 600 հոդուց՝ 561·600 հոդին խորհրդային իշխանության լուսավայծառ տարիների ծնունդն են, վորոնք փարթամ կերպով աճում ու սովորում են, վորոնք չեն տեսել ցարիզմի ու դաշնակցական կողոպտիչների հրեշտավոր գործերը 1919—20 թվերին և այն, թե ինչ դրության մեջ եյին իրենց ծնողները։ Այդ թվերի ազգաբնակության աճման մասին խոսել չարժե, այդ ժամանակ մարդիկ կոտորվում և մահանում եյին և վոչ աճում։ Սակայն 1913 թվի համեմատությամբ՝ 19 տարիների աճը ունկորդային է։ 1913 թվին յուրաքանչյուր 1000 հոգուն ծնունդ լինում եր 34 մարդ, մահանում եյին 18, աճում եր 16 հոգի։ 1936 թ. ծնվում եյին 42, մահանում 14, աճում եր 28 հոգի։ 1938 թվին ծնվում եյին 44, մահանում 13, աճում եր 31 հոգի։ 1939 թ. հունվարի մարդահամարից հետո մինչև հոկտեմբեր ամիսն ազգաբնակությունն աճել է մոտ 28·000 հոգով, 1913 թվի հետ համեմատած, այժման վաղապես չափերի յե հասնում մահացությունը։

Այս թվերը ցույց են տալիս մեր աշխատավորության նյութական ու կուլտուրական լավագույն սրայմանները։ 1914 թվի 17 բուժական հաստատությունների փոխարեն Հայաստանում 1938 թ. գործում են 64 բուժ. հիմնարկություն 2·727 մահճակալներով, այդ թվում կան 12 ծննդյան տներ 442 մահճակալներով։ Գործում են 8 հակոլիսողային ծննդյան տներ 45 մահճակալներով, հակամալրիային կետեր 36 հատ, սեզոնային և մշտական մանկամառներ 624 հատ, վորտեղ ընդդրկված են 13·932 յերեխաներ։

Այժմս գործող յերկու սանատորիաները իրենց 449 մահճակալներով մինչև 1939 թ. հոկտեմբերի 15-ը սպասարկել են 1·485 հիվանդի և 9 հանգստյան տները, 1001 մահճակա-

ներով, սպասարկում են տարեկան մեծ քանակությամբ հանդըստացողների: Այս բոլոր միջոցները նպաստում են մեր յերջանիկ ժողովրդի ավելի առողջ լինելուն, և մահացությունն իջեցված են նվազագույն չափի:

Կառավարության վրոշումները՝ արորտն արդելելու, բազմազավակ մայրերին նպաստ տալու մասին նույնագետ խոշոր խթան հանդիսացան աղջարնակության աճման գործում: 1938 թվին նպաստ ստացող բազմազավակ մայրերի թիվը կազմում էր 3·110 հոգի. նրանք պետությունից ստացել են՝ 1938 թվին 15·540·000 ռուբլի: 1939 թվի նոյեմբերի 1-ին 2·870 հոգի եյին, վորոնք ստացել են 16·007·000 ռուբլի:

Ժողկոմխորհն ամեն որ ստանում է մի քանի տասնյակ վրոշումներ բազմազավակ մայրերին նպաստ տալու մասին: Հանրապետության մեջ մի քանի հարյուրների յէ հասնում 8—9—10—11 և ավելի յերեխա ունեցող մայրերի թիվը, վորոնք պետությունից ստանում են տարեկան 2-ից—5 հազ. ռուբլի և դեռ ավելի գումար: Այդպիսով մեր յերջանիկ և ուրախ մայրերը հայրենիքին տալիս են առողջ ու կենառախ մանուկներ:

Խոշոր չափերի յեն հասնում Սոցազահովության ժողկոմատի այն գումարները, վոր տրվում են հաշմանդամներին, ծերերին, հիմանդրներին, մանկատներին, հողերուժական հիմնարկներին, տանատորիաներին, տրախոմայի, մալարիայի դեմ սլայքարելու բուժհիմնարկներին. այլ տեսակի ծախսեր 1938 թվին յեղել են 11 մելիոն 594 հազար 600 ռուբլի, իսկ 1939 թ. 13 միլիոն 400 հազ. ռուբլի, չհաշված տեղական բյուջեյով հատկացված ծախսերը:

Մեր կուսակցության սմենորյա հողատարության արդյունքն ե բնակարանային ու կոմունալ շինարարության հակա տեմպերով ծավալումը: Յեթե 1932 թվին կար պետա-

կան բնակարանային ֆոնդում 271·594 քառ. մետր տարածություն, ապա 1938 թ. կար 430·220 քառ. մետր տարածություն, իսկ 1939 թվին ավելի խոշոր չափերի յեհասել այն:

Հանրապետության մեջ, առանց Յերևան քաղաքի, կառուցված ե՝ 32 հյուրանոց, 90 հանրակացարան, 27 բաղնիք, 14 ջրմուղ, բնակելի շենքեր 74·577 քառ. մետր: Այս թվերը ցույց են տալիս, վոր մեր շրջանների շինարարությունը կատարվում է աննախընթաց թափով:

Բոլոր շրջաններում, առանց բացառության, մեր աշխատասեր կոլխոզներն ու կոլխոզնիկները կառուցել ու կառուցում են լուսավոր ու մաքուր բնակարաններ իրենց բոլոր հարմարություններով: Զափաղանց շատ ե այն կոլխոզնիկների թիվը, վորոնք կղմինդրածածկ յերկհարկանի, տախտակած առաստաղով ու հատակով բնակարաններ են կառուցել: Կառուցում են ակումբներ, գյուղխորհուրդների և կոլխոզների գրասենյակներ, մաքուր ու լուսավոր դոմեր, պահեստներ և բազմատեսակ այլ շինություններ:

Շատ գյուղեր յենթարկված են պլանավորման, կառուցվում են կուլտուրայի և հանգստի պարկեր, բաղնիքներ, ճաշարաններ, հացի փոեր և այլն:

Այս բոլորը կատարվել ու կատարվում ե՝ գյուղատընտեսության կոլեկտիվացման, նրա առատ բերքատվության շնորհիվ: Խորհրդային բոլոր ժողովուրդների նման, մեր աշխատավորությունն ուրախ է ու յերջանիկ, աշխատասեր և ու մարտնչող:

19 տարիների ընթացքում իսպառ վոխվել ե Խորհրդային Հայաստանը, ուղղակի դարձել ե անճանաչելի: Հանրապետության մայրաքաղաքը այժմս ունի այն ամենը, ինչ ունեն մեր յեղբայրական հանրապետությունների մայրաքաղաքները: Յերևանում կառուցված մի շարք գործարանները, թատրոնները, կինոները, բնակելի ու հյուրանոցային

բաղմահարի ամուր շենքերը, ասֆալտապատված ու սալպ-
հատակված լայն ու լուսավոր փողոցները, կուլտուրայի ու
հանդստի պարկերը, մի քանի փողոցներով անցնող տրամ-
վայները, հսկա ելեկտրոկայանները մեր Հանրապետու-
թյան պարծանքն են հանդիսանում։ Դժվար է թվարկել ամե-
նորյա այն խոշոր շինարարությունները, ինչ կատարվում են
մայրաքաղաքում։ Որինակի համար բավական է նշել Ստա-
լինի անվան պրոսպեկտը, կայարանի հրապարակն ու նրա
շարունակելի փողոցը, Ժող. տունը, վորի վրա ծախսված
է 12 միլիոն ռուբլի և այլն։

Այժմ Հանից ձեռնարկված եւ և Նոյեմբերյան հեղափո-
խության 20-րդ տարեղարձին պատրաստ կլինի, ճնշված
մարդկության աղատարար, առաջավոր մարդկության մտքի
ստեղծագործ, մեր անհաղթ կուսակցությունը ստեղծող
կենինի հուշարձանը։

Վող Հանրապետության ու մայրաքաղաքի աշխատա-
վորությունը մեր փառապանծ կուսակցության ղեկավա-
րությամբ ձեռք բերած հաջողությունների համար յերախ-
տաղիտության դրացմունքով և հիշում մեծ Ստալինին։
Գրողները, բանաստեղծները, աշուղները իրենց յերդերի
լավագույններից լավագույնը նվիրում են նրան, ում ան-
վան հետ ե կապված իրենց հայրենիքի վերածնունդը։

Հայ ժողովրդի ականավոր բանաստեղծ՝ Լենինի շքա-
նշանով պարզեատրված Նայիրի Զարյանի իր յերդերի մի քա-
նի տողերի մեջ այսպես ե նկարագրել հայ ժողովրդի նվիր-
վածությունը, անմոռանալի յերախտագիտության դրաց-
մունքները։

Յերգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենին,
Դու ազգերի յերջանկության նարտարապետ ու դարբին...։
Դուք ոգնության լույս նետեցիք ժողովրդին իմ չոփած,
Դուրս կոչեցիք մահվան վիհից դեպի կյանքի դուռը բաց...
Յեկ իմ չենաղ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում։

Իք նոր աշխարհն է կառուցում ֆեզնով լեցուն մի սերունդ։
Յեվ յես նրա ծոցից յելած մի խանդակառ քանաստեղծ,
Բերում եմ ֆեզ իմ յերջանիկ ժողովրդի սերը մեծ,
Յերգում եմ ֆեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենին,
Դու մարդկության յերջանիկության նարտարապետ ու
դարբին»։

Աղատաղրված, ուրախ ու յերջանիկ Հայաստանի աշխատավորությունը խորհրդային իշխանության, տարիներին իր սեփական դալրոցներում կրթել ու դաստիարակել ե կոմունիզմի դործի համար մարտնչող մեծ քանակությամբ կադրեր, վորոնք անդուլ պայքարում են կոմունիզմի կառուցման, ժողովրդի բարեկեցիկ կյանքի համար, կադրեր, վորոնք տեխնիկայի թամբին նստած՝ պատվով են արդարացնում իրենց վրա դրված հույսերը։

19 տարիների ընթացքում պատրաստված են՝ 570 ճարտարապետներ, 771 դյուզատնտեսներ, 865 անասնաբույժներ և զոռտեխնիկներ, 516 տնտեսագետներ, 949 բժիշկներ, 1.473 մանկավարժներ, 54 արվեստի աշխատողներ, 692 կուտ. և խորհրդային աշխատողներ և այլն։

Ինչպես նշված կադրերից, նույնական ժողովական բոլոր բնադավառներում խոշոր ու բեղմնավոր աշխատանք կատարողներից ԽՍՀՄ-ի շքանշաններով պարզեցարված են ավելի քան 400 հոգի, Հայկական ԽՍՀ շքանշաններով, պատվողներով ու զանազան կոչումներով՝ ավելի քան 947 հոգի։ Այս թվերը ցույց են տալիս, մի կողմից, մեր աշխատավորների բեղմնավոր ու ստեղծագործ աշխատանքները, մյուս կողմից մեր կուսակցության ու խորհրդային իշխանության հոգատար վերաբերմունքն ու արժանի գնահատականը լավագույն աշխատողների նկատմամբ։

Հայ ժողովուրդն ու Հայաստանի աշխատավորությունը շարունակ ապացուցել են իրենց համախմբվածությունը, անքն ու նվիրվածությունը մեր մայր կուսակցությանը,

Խորհրդային իշխանությանն ու սերելի Ստալինին։ Նրանք այդ ցույց տվին ԽՍՀՄ-ի և Հանրապետության Դերադույն Խորհրդների ընտրությունների ընթացքում, իրենց ձայնը տալով կուսակցական և անկուսակցական Ստալինյան բլոկի թեկնածուների ողտին։

Հայկական ԽՍՀ Գերազույն Խորհրդի ընտրություններին Հայաստանի աշխատավորների 99,06%-ը մասնակցեցին ընտրությանը և թեկնածուների ողտին ձայն տվին 99,67%-ը։

Անցյալ յերկու ընտրությունների հարուստ փորձի հիման վրա անց են կացվում Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների տեղական Խորհրդների ընտրությունները, Հայկական ԽՍՀ Սահմանադրության և աշխատավորների դեպուտատների ըրջանային, քաղաքային, դյուզական և ավանային Խորհրդների ընտրությունների կանոնադրության համաձայն։

Այժմյան ընտրությունները բավականին մանրակրկիտ, բազմազան և ավելի շատ աշխատանք են պահանջում։ Սխալ են նրանք, վորոնք անցյալ ընտրությունների հաջողություններով հարբած՝ յերբեմն ինքնահոսի յեն բատնում ընտրությունների չափաղանց պատասխանատու աշխատանքները, կարծելով, թե առանց հետեւողական և լուրջ աշխատանք կատարելու, ագիտացիան յուրաքանչյուր ընտրողի հասցնելու, կոտանան այն արդյունքը, ինչ ստացվեց անցյալ ընտրություններին։

Պետք է նկատի ունենալ, վոր Հանրապետության մեջ կան 9 քաղաք, 4 քաղաքային ուայոն, 9 քաղաքատիպ վայր, 38 շրջան, 672 գյուղխորհուրդ, 8 բանվորական ավան։ Պարզ է ուրեմն, թե վորքան աշխատանք ե պահանջվում՝ նշված Խորհրդների դեպուտատներ ընտրելու համար։ Նամանավոնդ, վոր ընտրելու յենք 11·965 դեպուտատ, վորոնցից՝ 1·158 շրջխորհուրդների, 740 քաղխորհուրդների, 351 քաղ-

ռայխորհուրդների, 9·408 դյուլխորհուրդների, 308 ավանային (վորի հետ հաշված են քաղաքատիւլ վայրերը) Խորհուրդների դեսպատատներ :

Յեթե նկատի ունենանք, վոր կազմակերպվել է 1·174 անդամաս, 770 ընտրական հանձնաժողովներ, 11·965 ոկրուդներ, ապա տեղամասային, ոկրուդային ընտրական հանձնաժողովներում պետք է ընդդրկվեն մոտ 69·426 մարդ, վորից՝ 4·632 հոգի ընտրական հանձնաժողովներում, 51·044 ոկրուդային հանձնաժողովներում և 13·750 անդամասային հանձնաժողովներում։ Պարզ է, թե վորքան աշխատանք է պահանջվում այդ ուղղությամբ։

Հանձնաժողովների բոլոր անդամներն առաջարկվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների կողմից, հետեւապես հանձնաժողովների յուրաքանչյուր անդամ պետք է լինի աշխատող ու պայքարող լավադույն ընկեր։

Հոկտեմբերի 24-ից, վորը հանդիսանում է ընտրությունների կամալանիայի սկիզբը, ծավալվել են դործնական աշխատանքներ, տեղերում ձեռնամուխ են յեղել տեղամասեր, ոկրուդներ կազմելու և հրապարակելու։ Ընտրական ոկրուդային, տեղամասային հանձնաժողովների կազմը ընտըրվել և համապատասխան Խորհուրդների կողմից հաստատվել է։ Տեղերն են ուղարկված ընտրությունների ձեռները, տեղերում շրջխորհուրդների և քաղխորհուրդների բյութեններ տպաղելու համար։ Համապատասխան քանակությամբ թուղթ արդեն ուղարկված են շրջաններին դյուլական և ավանային Խորհուրդների ընտրության համար տպադրված բյուլետեններ։ Արդեն կազմվել են ընտրողների ցուցակները և ընտրողները ծանոթացել են դրանց։

Այդ բոլոր նախապատրաստական ու դործնական աշխատանքները կատարվում են ընտրությունները հաջող անցկաց-

նելու համար։ Արդեն առաջադրվում են շրջանային, քաղաքային, ուսունական, դյուղական և ավանային խորհուրդների գեղութատության թեկնածուների թեկնածություններ։

Մեր շրջանային կուսակցական ու խորհրդային մասսաները պետք են նկատի ունենան, վոր ամենափոքր շրջանում անդամ 200 հոգուց ավելի դեպուտատներ են ընտրվելու։ Անհրաժեշտ ե այժմ վանից լուրջ աշխատանք կատարել՝ լավագույններից լավագույններին առաջադրելու դեպուտատության թեկնածուներ։

Մեր աշխատավորական մասսաները, կուսակցական և անկուսակցական բոլշևիկները պետք են ընտրեն այնպիսի ժարդեկանց, վորոնք արտադրության մեջ իրենց արդարացրել են վորպես ստախանովականներ ու հարիւածայիններ, դասակարգային թշնամիների դեմ անողոք մարտնչողներ, աղնիվ ու հայրենասեր, կոմունիստական կուսակցությանը անհունորեն նվիրված մարտիկներ, ուրիշ խոսքով՝ պայքարի մեջ խասանցիների, արտադրության մեջ ստախանովականների նման մարտիկներ։

Մեր յերկրի ուրախ ու յերջանիկ ժողովուրդները բոլոր Հանրապետություններում ընտրում են իրենց տեղական Խորհուրդները այն պահին, յերբ անդիւճան ու Փրանսական խմակերիալիստները նվաճողական պատերազմ են մղում, կամենալով աշխարհը վերածել նոր արյունահեղ սպանդանոցի։ Աշխատում են, վորքան հնաբավոր ե, շատ չեղոք յերկրներ (ինչպես Թյուրքիան և) ներդրավել պատերազմի որբիտի մեջ, ստեղծել աշխարհը վերաբաժանելու հոգտիչ դայլերի նորոգված վորջ, նոր Վերսալյան վորջ։

Դա յէ պատճառը, վոր Անդիւճան և Ֆրանսիան ավելի քան յերկու ամիս ե, ինչ անխմաստ սրատերազմ են մղում Գերմանիայի դեմ։ Ամբողջ աշխարհին հայտնի յէ, վոր խորհրդային իշխանությունը վարել ե ու վարում ե խաղա-

ղասիրական քաղաքականություն. այդ եւ ապացուցում ԽՍՀ
Միության Գերազույն Խորհրդի արտակարդ հինգերորդ սե-
սիայում ընկեր Մոլոտովի ղեկուցումը:

Պաշտամնելով խաղաղասիրական քաղաքականությունը՝
խորհրդային իշխանությունը աշխատում է վոչ միայն
ապահովել Սոցիալիզմի յերկրի խաղաղ աշխատանքը, աշ-
խատավորների յերջանիկ կյանքը, այլև աշխատում է, վոր
խաղաղություն լինի ամբողջ աշխարհում, ամեն կերպ ոգնում
է ու միջոցներ եւ ստեղծում Յեվրոպայի ալեկոծված պատե-
րազմից ապահով պահելու մեր սահմանակից ու սահմանից
դուրս մանր պետությունների անվտանգությունն ու խաղաղ
աշխատանքը: Այդ բանի ապացույցն են Լատվիայի, Լիտվայի,
Եստոնիայի հետ կնքած պայմանագրերը: Խաղաղասիրու-
թյան ու ճնշված ժողովուրդներին ոգնելու վայլուն ապա-
ցույցն եւ Արևմտյան Ռուսականացի և Արևմտյան Բելոռուսիա-
յի դարերից ի վեր ճնշված ժողովուրդների ազատագրումը:

Ինչպես հայտնի յէ, Արևմտյան Բելոռուսիայի և Արև-
մտյան Ռուսականացի աշխատավորությունը բուռն կերպով ու
խանդակառությամբ դիմավորեց Կարմիր բանակի քաջարի
զորամասերին, իրենց ընդմիշտ պղատաղրողներին: Աշխա-
տավորությունն իր ժողովրդական ժողովների դեմու-
տատներին նակաղ տվեց և բուռն կերպով պահանջեց՝
հաստատել խորհրդային իշխանություն, մտնել Խորհրդա-
յին Ռուսականացի և Խորհրդային Բելոռուսիայի կազմի մեջ:
Ժողովուրդը պահանջեց իր դեպուտատներից՝ բոնա-
դրավել կալվածատերերի, չինովնիկների, պետական ու
յեկեղեցական հողերը, ազգայնացնել բանկերն ու իուսոր
յեկեղեցական հողերը, Արևմտյան Ռուսականացի և Արե-
մտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովները կատարե-
ցին ժողովրդի բոլոր պահանջները. Ժողովրդական ժողով-
ներն ընտրեցին իրենց լիազորված հանձնաժողովները և
ուղարկեցին Մոսկվա՝ դիմելու ԽՍՀՄ Գերազույն Խորհր-

դին, վոր ըավարարի աշխատավորական ժառաների պահանջները:

ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի արտահերթ հինգերորդ սեսիան ընդառաջելով այդ չափաղանց նշանակալից պահանջներին՝ վորոշեց՝

«Բավարարել Արևմտյան Ռւկրաինայի ժողովրդական ժողովի խնդիրը և Արևմտյան Ռւկրաինան մտցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կազմի մեջ, այն վերամիացնելով Ռւկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը»:

Նույն ձեռով ու բովանդակությամբ ել վորոշում ե կայացվել Արևմտյան Բելոռուսիայի նկատմամբ՝ «Բավարարել Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի խնդիրը և Արևմտյան Բելոռուսիան մտցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ, այն վերամիացնելով Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը»:

Զտեսնված ցնծությամբ դիմավորեցին Արևմտյան Ռւկրաինայի և Բելոռուսիայի ժողովուրդներն այդ պատմական վորոշումները, նույն ցնծությամբ ու հրճվանքով դիմավորեցին Խորհրդային 170-միլիոնանոց ժողովուրդները արյունակից ռւկրաինացիների և բելոռուսների մուտքը իրենց իրավահավասար մեծ ընտանիքի մեջ:

Մեր լայնածավալ հայրենիքը հղոր ե ու անպարտելի, խորհրդային ժողովուրդը աշխատող ե ու մարտնչող, հայրենասեր ե ու յուրաքանչյուր վերշոկ հողը արյան վերջին կաթիլով պաշտպանող:

Ստալինյան հնգամյակները յերկրին տվին և տալիս են այն ամենը, ինչ հատուկ է Սոցիալիզմի հայրենիքի ել ավելի ծաղկմանն ու զարդարմանը, ինչ անհրաժեշտ է խաղաղ ու յերջանիկ կյանքի հիմքը, կոմունիզմը պաշտպանելու համար:

Հնդամյակի տարիներին յերկիրն ապահովվեց ինքնապաշտպանման ժամանակակից անհրաժեշտ միջոցներով։ Եսրհրդային ստեղծադործ, աշխատասեր ժողովուրդն իր հայրենիքը սիրում է սեփական կյանքի նման, պատրաստ է թշնամու վոտնձղության դեպքում ջախջախելու նրան նրա իսկ տերիտորիայում։ Այդ բանի ապացույցն են Խասան լճի շրջանում տեղի ունեցած դեպքերը, վորոնք լի յեն խորհրդային հերոս ժողովրդի խիղախ սահմանապահների անորինակ սխրագործություններով։ Այդ ապացուցում են Արեմյան Ռւկրախինայի և Բելոռուսիայի տանջված ժողովուրդներին ազատադրելու ընթացքում, լիհական ջախջախված կառավարության զորքերի դեմ մարտնչելիս քաջարի Կարմիր Բանակի կատարած աննման սխրագործությունները։

Այդ և նման վաստերն ապացուցում են այն, վոր խորհրդային ժողովրդի ազատ կյանքի, խաղաղ աշխատանքի, անսահման իրավունքների վրա թշնամիների կատարած յուրաքանչյուր վոտնձղություն կվոչնչացվի նույն ձեւով ու արագությամբ, ինչպես Խասան լճի ու Լեհաստանի շրջաններում, վորովհետեւ Կարմիր Բանակը նույն խորհրդային հղոր ու անպարտելի բանակի ավանդարդն է։ Հարկ յեղած դեպքում խորհրդային ամրող բանակը, 183-միլիոնանոց բանակը սլայքարի կնետովի՝ թշնամիներին անխնա ջախջախելու համար։

Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը յեղել և կմնա հավատարիմ մեր հղոր կուսակցությանը, նրա փորձած դեկամեր՝ սիրելի Ստալինին։

Հայաստանի աշխատավորությունը ինչպես միշտ, այս անգամ ևս կապացուցի իր սերն ու նվիրվածությունը, մեր կուսակցությանը և Խորհրդային ամենահզոր պետությանը։

Հաջողությամբ ընտրելով շրջանային, քաղաքային, քաղաքային ուայոնական, դյուղական և ավանային Խորհուրդների դեպուտատներին, մեր աշխատավորությունը մի խոշոր

և վճռական ջախջախիչ հարված կհասցնի ժողովրդի վոխն-
րիմ թշնամիների՝ աջ-տրոցկիստական-բուխարինական-դաշ-
նակցական-բուրժուա-նացիոնալիստական իժերի մնացորդ-
ներին:

Մենք վստահ ենք, իվոր մեր Հանրապետության աշխա-
տավորությունը ինչպես միշտ, կլինիկ և կմնա հայատարիմ ու-
սնանվեր, մարտնչող ու կրքու հայրենասեր, վորովհետեւ
տեղ զեկավարում և ամբողջ աշխարհի ճնշված մարդկության
սիրելի, կոմունիզմի լուսատու ջահ, մեզ յերշանիկ էյանքի
հիմնադիր՝ մեծ Ստալինը:

08651
15980



Տեխն. լուս. Օ. Խաչատրյան
Պատ. սբրագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № Կ. 2537, հրատ. № 763

Պատվեր № 248, տիրաժ 10.000

Հանձնվել և արտադրության 26/ХІ 1939 թ.

Ստորագրվել և տպագրելու 28/ХІ 1939 թ.

Գինը 30 կ.


Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
Երևան Ալբանիայուն № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220034062

(254)



ԳԻՐ 30 4.

Հ Յ Ա Յ Ա Յ Ա Յ

մ. ՊԱՂՅԱՆ

СОВЕТСКАЯ АРМЕНИЯ ЗА ДЕВЯТИНАДЦАТЬ ЛЕТ

Государственное издательство политической литературы

Եреван • 1939